

Գ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

★

ՅԵՐԵՎԱՆ — 1933




Գ. ԱՂԱԶԱՆՅԱՆ

633.1

Ա

ՀԱՅԱՎԱՏԻԿՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱԳՐՈՋԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

15664
A $\frac{II}{23042}$



ՅԵՐԵՎԱՆ—1933

Պետերսի տպարան

Գլավիտ 9173 (բ)

Պատվեր № 499

Տրամ 20,0



Սրբագրեցին՝

Ս. Հակոբյան, Վ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻԿՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայաստանիկային հույսաբարձները Միության ժողովրդական տնտեսության մեջ ունեն առանձնակի կարևոր նշանակություն։ Այդ բղխում է նրանից, վոր մեր լերկիրը ազդարարին ինդուստրիալ յերկրից արագությամբ վերածվեց խոշորագույն ինդուստրիալ լերկրի, սակավ լավ են նոր խոշոր քաղաքներ, արդյունաբերական շրջաններ ու բանվորական ավաններ, արագությամբ աճում և զարդարաբարձում ուժը։ Այդ լերկրից պահանջվում է հացի հավելյալ սեստրաներ, Մուս կողմից մեր լերկրի ինդուստրացման գործը, Խորհրդային Միությունը կապիտալիստական յերկրներին տնտեսական կախումից լիովին ազատագրելու գործը պահանջում է ուժեղացնել հացի արտադրությունը։ Այդ բոլորից բացի մեծ Համերով աճել է Միության ազդարանակցությունը (մոտ 30 միլիոնով) և մեծ Համերով բարելավվել է (ու շարունակում է տեղեկորեն բարելավվել) բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորական լայն զանգվածների (մանավանդ կոլտնտեսականների) նշանակալիկները և ինչպիսիք փոխակր, աճել է նրանց սպառողականությունը և մասնավորապես հացի սպառողականությունը։ Յեթև գրանց ավելացնենք նաև այն, վոր Միությանը անհրաժեշտ է հացի խոշոր պաշար՝ աներկրիության տարիներին և հնարավոր ինտերվենցիային պատրաստ դիմավորելու համար, ապա պարզ կլինի, թե ինչու կուսակցությունը և կառավարությունը ներկայումս վճարականորեն խնդր են դնում արագությունը բարձրացնել հայաստանիկների բերատվությունը, իսկ Միության միջանի շրջաններում, վորնց թվում նաև Հայաստանում, լայնացնել նաև ցանքի տարածությունը։

Ինչպես վոր Միության մեջ, ապա ել մեզ մոտ՝ Հայաստանում լայն և անապառ նարագործությունների կան ալ խնդրը արագ լուծելու և ալ մասին կուսակցության ու կառավարության տված վորոշումները կենսագործելու։

Խորհրդային Միության բազմաթիվ և Հայաստանի շատ շրջանների կլիմայական և հողային բարենպաստ պայմանները, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, մեքենայացումը, հանքային պարարտանյութերի գործադրությունը և այլ ձեռնարկումներն ստեղծում են բոլոր հնարավորությունները՝ մաքսիմալ չափով բնդարձակելու հացահատիկային կուլտուրաների քանակական և վորակական ցուցանիշները: Սովխոզներում և կոլխոզներում լայն հնարավորություններ են ստեղծված մաքսիմալ չափով ոգտադործելու կատարելագործված մեքենաներն ու գործիքները, օգրոտեխնիկայի նորագույն ավանները, ապա և արտադրական եֆեկտի արագ իրականացումը:

Կուլակցության և կառավարության վորոշումները բերքի բարձրացման (Միության մեջ հացահատիկների բերքատվությունն այս տարի՝ միջին թվով հեկտարին 9 ցենտներ հասցնելու) մասին՝ պետք է դիտվի վորպես միևնույն և իրականացվի գերակատարումով:

1933 թ. գյուղատնտեսության ֆորնտում հանդիսանալու յե վորպես բերքատվության բարձրացման համար մղվող պայքարի տարի: Մենք խոշոր նվաճումներ ունենք տարածությունների լայնացման տեսակետից: Այժմ շատ կարևոր է ցանքը կատարել աշնպես և մշակությունը տանել այն ուղղությամբ, վորպեսդի նաև բերքի մասին յեղած առաջադրանքները կատարվեն և գերակատարվեն:

Անցած տարիների ընթացքում մենք ունեցել ենք հսկայական կորուստներ վոչ բարձր բերքատվության հետևանքով, այժմ մեր հնարավորություններն ավելի քան մեծացել և կատարելագործվել են, մենք այժմ լայն չափով պիտի ոգտադործենք սոցիալիստական տնտեսությունների բոլոր առավելությունները՝ կորուստների դեմ պայքարելու համար: Սովխոզներում և կոլխոզներում ոգտադործելով բոլոր միջոցները, մենք կարող ենք լուծել և կլուծենք բերքատվության բարձրացման կարևորագույն խնդիրը:

Սովխոզներում և կոլխոզներում աշխատանքի ճիշտ կազմակերպումով, տնտեսական վարչության, սովխոզականության և տնդիսցիպլինարության դեմ պայքարելու հետ մեկտեղ, այդ պորընմի հաջող լուծման համար անհրաժեշտ են մի շարք ագրոտեխնիկական ձեռնարկումներ, վորոնց մեջ խոշոր տեղ են գրավում պարարտացումը, վորը, ցանքը և ցանքաշրջանառությունը: Ուստի և թված այդ խնդիրների վրա մենք կանգ կառնենք մանրամասնորեն:

1. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Բերքատուության բարձրացման խնդրում հողի մշակումը հանդիսանում է առաջին և հիմնական պայմանը: Հողի ռացիոնալ մշակման հետևանքով հնարավոր է բերքը բարձրացնել մինչև 50⁰/₁₀ ուղ (միլինը): Առանձնապես մեծ է հողի ռացիոնալ մշակման նշանակությունը մեղ մոտ՝ 10. Հայաստանում, ուր հողերը գտնվում են անկուտուրական վիճակում, ամբողջապես վարակված են մոլախոտերով, ջրալին պաշարը հողում մեծ չի և մթնոլորտային տեղումները շատ շրջաններում նորմայից պակաս են: Նման պայմաններում նույնիսկ պարարտանյութերի եֆեկտը զգալիորեն պակաս է լինում, և հողի մշակումը դառնում է հանգուցային խնդիրներից մեկը:

Սովխոզներում և կոլխոզներում կան բոլոր հնարավորությունները՝ հողի մշակման աշխատանքները կատարելու ժամանակին և բարձր վորակի նշանաբանի տակ:

ԻՆՁ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Հողի մեխանիկական մշակությունն ուժեղ կերպով փոխում է նրա «սարուկտուրան», նրա կազմությունը:

Մշակման միջոցով մենք մեծացնում ենք հողում գտնվող վոչ կապիլյար անցքերի տոկոսը, պինդ հողերում, ընդհանրապես մեծ է լինում կապիլյար անցքերի տոկոսը: Վորովհետև հողի մեծանդի ունեցող պրոցեսները մեծապես կախված են այդ վոչ կապիլյար և կապիլյար ծակոտկենություն հարաբերությունից, ապա պարզ է, վոր վարը և հողի մշակությունը պիտի մեծ դեր կատարեն բույսերի զարգացման և բերքատուության բարձրացման խնդրում: Սակայն այստեղ անհրաժեշտ է շնչառել, վոր հողի մեխանիկական մշակությունը միևնույն տեղում յերկար տարիներ տնընդհատ կրկնվելով առանց ցանքաշրջանառություն կարող է նաև ունենալ բացասական հետևանք, փրելով և փոշիացնելով հողի կնժիկները: Այդ յերևույթից խուսափելու համար անհրաժեշտ է կիրառել ցանքաշրջանառություն, իսկ ավագային և որգանակն նյութերով աղքատ հողերը պարարտացնել նաև գոմաղբով: Գոմաղբը, ինչպես նաև հողում լեղած բույսերի արմատները փոխվով մրտցնում են հողի փոշիացած մասնիկները միմյանց, կազմում

են կնծիկներ և, այդպիսով, լավացնում են հողի ֆիզիկական
դուրեթյունը: Համանման դեր կատարում են նաև ցանքաշրջանառու-
թյունը:

Հողի մշակումն առաջին հերթին դրեղ միջոց և հողում յե-
ղած ջրի քանակը մեծացնելու և ջրային ռեժիմը կանոնավորելու,
դեկավորելու տեսակետից, Խնչպես արգեն ավելց, հողը դառնում
և ջրաթափանցիկ յերբ նրա մեջ մեծածում և վեժկադիլար տնց-
քերի տոկոսը, իսկ դա իր հերթին նպաստում և հողի վրա թափ-
վող ջրերի հեշտ յուրացնելուն և մյուս կողմից՝ յուրացրածի դժվար
գոլորշիանալուն: Այսպիսով վարը նպաստում և ջուր կուտակելուն,
պահելուն և ռացիոնալ ոգտագործելուն: Պինդ և վատ հերկված
հողերում ջուրը նախ հեշտությամբ ներս չի ծծվում և ծծվածն էլ
կադիլարների միջոցով արագ բարձրանում և վերև ու գոլորշիա-
նում:

Հողի վարը բաղմացնելով մեծանցքերի քանակը, նպաստում
և հողի մեջ ող թափանցելուն, նրա ալերացիային, հետևապես
նաև հողմնահարությանը:

Բույսերի արմատներն իրենց շնչառության համար պահան-
ջում են դպարի քանակությամբ ող և պակաս չեն դեպքեր, յերբ
հողի պնդության հետևանքով ողի մուտքը դժվարանում և նրա
մեջ և դա պատճառ և դառնում քույսերի թույլ դարգացման: Հողի
մշակումն ուժեղ կերպով աղղում և նաև հողի սննդառության
ռեժիմի վրա: Վարից հետո ուժեղանում և հողում. ասլըող բակ-
տերիաների աշխատանքը, ինչպես նաև ավելի ինտենսիվորեն և
կատարվում բիոլոգիական պրոցեսները: Բացի դրանից, վարի մի-
ջոցով հողում մնացած արմատային մնացորդներին և քայքայման
յենթակա ալ նյութերին մենք ավելի նպաստավոր պայմանների
մեջ ենք դնում հեշտությամբ քայքայվելու, ավելի տարբալան,
ավելի պարզ նյութերի վերածվելու և բույսերին իրեն սնունդ
ծառայելու: Բացի դրանից, բակտերիաների ուժեղ աշխատանքի
հետևանքով հողում գտնվող հանքային նյութերի հսկայական պա-
շարը (աղոտ, ֆոսֆոր, կալիում և ալն), վորը հողերի մեծ մասի
մեջ լինում և դժվարալուծ միացությունների, ապա և բույսերի
համար անմատչելի ձևով, նույնպես հնարավոր և լինում ոգտա-
գործել բույսերի դարգացման համար:

Մոռոր դեր և կատարում վարը և հողի մշակությունը նաև
մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից, ալն մոլախոտերի,
վսրոնք ատանյակ և հարյուրավոր միլիոններով վարակում են մեր

ցանքերը, կուլտուրական բույսերից խելում են ջուր և սննդանյութ-
թեր, նրանց զրկում են արեգակի լույսից և ջերմությունից, և
աչդպիսով պատճառ դառնում բույսերի թուլլ զարգացման, ապա
և նվազ բերքատվության: Հողի մշակման հետեանքով մոլախո-
տերի զգալի մասը կտրվում և վոչնչացվում է, մի վորոշ մասն եւ
ընկնում և հողի տակ և լույսի ու ջերմության բացակայության
հետեանքով մեռնում, իսկ կոճղարմատավորները և կոճղեղավորները
դրանից տուժում են աննշան չափով: Դրանց դեմ պետք և ուղի-
քաբել ալ մեթոդներով, ալ ձևերով:

Վերջապես, հողի ռացիոնալ մշակումը հնչատցնում և արա-
դացնում և ցանք կատարելը, ոպտիմալ վիճակի մեջ և դնում բույ-
սերի արմատները, մեխանիկական աշխատանքը նրանց անեցո-
ղության ժամանակ: Լավ վարած և փութը հողերում բույսերի
արմատներն ափսիլ քիչ ենեղիւա լին ծախսում հողի խոր և տար-
բեր շերտերը թափանցելու համար:

Մինչ այժմ ասածներից դժվար չե դալ այն յեղրակացու-
թյան, վոր հողի մշակումը բերքի բարձրացման համար տարվող
աշխատանքների ողակների շարքում կարևորներից մեկն է և այդ
աշխատանքը պետք և կատարվի ճիշտ և ժամանակին:

Այժմ մի փոքր կանդ առնենք այն խնդիրների վրա, թե
ինչպես և ինչ ձևերով պետք և կատարվի հողի վարը:

Հողի վարը, ինչպես և հողի մշակման ալ գործողություն-
ներն իրենց մեջ կրում են նաև մի շարք անբարենպաստ մոմենտ-
ներ: Այդ մոմենտներից և հողի փոշիացումը և ջրի կորուստը՝
դուրրչիացման հետեանքով (վարած շերտի): Այդ իսկ տեսակետից
հաճախակի և անտեղի վարը նույնքան անցանկալի և ֆլաստակար
է, վորքան և վատ վարը, կամ հողի լրամ թողնելը: Բացի զրա-
նից, մեծ նշանակություն ունի հողի դրությունը վարի ժամանակ:
Հողի վարը պետք և կատարել այն ժամանակ, յերբ-նա ճհասու-
նացած է: Յերբ հողը վարվում է շատ չորացած վիճակում, ստաց-
վում են մեծ կոշտեր և տեղի լի ունենում ուժեղ փոշիացում:
Դրան հակառակ՝ յերբ հողը վարվում է շատ խոնավ ժամանակ
ստացվում է «ցխավար», հողը կպչում և գութանի մասերին, աշ-
խատանքը դժվարանում է, հողի մասնիկները մեմլանցից չեն
բաժանվում, և չորանալիս հետագայում դարձյալ տալիս է պինդ
կոշտեր կամ ժապավենի ձևով իրար կողք-կողքի դարաված հողա-
շերտեր: Այդ շերտերը կամ կոշտերը փրբելու համար մենք ստիպ-
ված ենք լինում գործադրելու գանազան տիպի փոշխեր, վորով

և նպաստում ենք հողի փոշիացման։ Այդ անհարմարութիւններին և քնասներից խուսափելու համար վարի ժամանակ պետք է հաշվի առնել հողերի առանձնահատկութիւնները և նրանց ջրանակութեան հատկութիւնները։ Տարբեր հողերն ունեն նաև տարբեր ջրաթափանցիկութիւն և տարբեր ջրունակութիւն։ Ընդհանուր առմամբ հեշտ և լավ վար ստացվում է այն ժամանակ, յերբ հողի մէջ լեղած խոնավութիւնը հավասար է լինում ընդհանուր խոնավունակութեան 50—60% -ին։ Թեթև ավազային և ավաղախառն հողերում վարի ժամանակ խոնավութեան տատանումները բերված թվերից կարող են ավելի մեծ լինել, քան թե ծանր-կավային հողերում։ Գործնական աշխատանքների ժամանակ հողի հասունութեան և վարի ժամանակը վորոշելու համար անհրաժեշտ է վերցնել հողից մի բուռ և սեղմել ձեռքի մէջ։ Հասունացած հողից սեղմելու ժամանակ ջուր դուրս չի գալիս, մասնիկները հեշտ բաժանվում են միմյանցից և գոտկատեղի բարձրութիւնից վայր ընկնելու դեպքում փշրվում են։ Յերբ հողը գտնվում է նման վիճակում, ապա ստացվում է փուխր, հարթ և հավասար վար և շատ հաճախ իսպառ վերանում է փոցխելու կամ տափանելու անհրաժեշտութիւնը։

ԻՆՁ ԽՈՐՈԹՅԱՄԲ ՎԱՐԵԼ ՀՈՂԸ

Թեթև, «սաղը» և համարվում այն վարը, վորը 12 սանտիմետրից ավելի չէ։ Միջին վարը՝ 13—17 սմ, և խորը՝ 17-ից ավելի։

Խոր վարը նպաստում է բերքի բարձրացման, վորովհետեւ դրա հետեանքով լավանում է հողի ջրա և ոգաթափանցիկութիւնը, ուստի և հողի խոր շերտերում տեղի չէ ունենում բիւլղիական պրոցեսների ուժեղացում։ Փորձերը ցույց են տվել, վոր համարյա բոլոր բույսերի (բամբակ, ցորեն, գարի, կարտոֆիլ և այլն) արմատները ցանքից 7—10 որ հետո արդեն ունենում են անհամեմատ խոր գնացած արմատներ, քան թե մեր վարն է, և վորքան վարը խոր լինի, այնքան ավելի մեծ կլինի ոգտագործվող հողի շերտը։ Սակայն, վարի խորութիւնը բոլոր բույսերի համար միատեսակ նշանակութիւն չունի, և իբրև ընդհանուր որոնք կարող ենք ասել, վոր վարի խորացումն ավելի ուժեղ է արտահայտվում շաբաթահերի և շաբաթ հացահատիկների վերաբերմամբ։

Առանձնեւրա ապացուցելու համար բերենք մեր Միության աստիճանները փորձադասերում դրված փորձերի արդյունքներն՝ ալիք ուղղութիւնով՝

№ քառ կադրի	Փորձնական իրականութիւններ	Բալսեր	Բերք մեկ հեկտ. ցենտներով			Բերք %/0-ով			Մանրութիւն
			վար 8-10 սմ	վար 16-18 սմ	վար 25-27 սմ	վար 8-10 սմ	վար 16-18 սմ	վար 25-27 սմ	
1	Ճարկովի փորձով.	Աշորա	19,0	19,2	19,2	100	101	101	
2	» »	Գարի	10,3	9,3	8,7	100	90	84	
3	» »	Պարտոֆիլ	162	160	168	100	99	101	
4	» »	Ճակն. կերի	112	136	156	100	122	139	
5	» »	Յեզիպասց.	28,5	29,6	29,1	100	104	102	
6	Գոլափայլ »	Գարն. ցորեն	10,6	12,1	12,6	100	114	119	
7	Բեզնիչուկի »	» »	8,9	8,2	8,2	100	96	96	
8	» »	Աշորա-աշն.	12,9	13,2	12,8	100	102	99	
9	Սերոսի փորձով.	Աշն. ցորեն	12,1	12,8	—	100	106	—	
10	» »	Գարն. ցոր.	6,8	7,0	—	100	103	—	

Բերած թվերը պարզ ցույց են տալիս, վարավելի խոր վաբը հացահատիկային մշակութիւնների համար կամ բոլորովին դաւաւան եֆեկա չի տալիս, կամ ալիք եֆեկաը շատ փոքր է, ուստի կարող ենք միանգամայն համարձակորեն ասել, վորնաե մերպարմաններում հացահատիկների համար հողը կարելի լի վարել 15—16 սմ. խորութիւնով, իսկ ավելի մաքուր հողերում դրանից եւ պակաս: Այս հանգամանքը շատ կարեւոր է, վորովհետեւ այն մեզ հնարավորութիւն է տալիս զգալի չափով բարձրացնելու վարի վրա դործադրվող աշխատանքների արտադրողականութիւնը և իջեցնելու հացահատիկների ինքնարժեքը: Դա մեզ հնարավորութիւն է տալիս վարը կատարել ավելի լայն ահիւսներով, մի հանգամանք, վորը պակաս կարեւորութիւն չունի մեզ համար:

Վարի խորութիւն խնդիրը վարելիս անհրաժեշտ է հաշվի

առնել նաև հողի տիպը և նրա մոլախոտերով վարակված լինելու աստիճանը: «Կանգառի», «չալիբի», «դանդուրդանի» և մի շարք այլ մոլախոտերի արմատները գտնվում են ավելի խոր շերտերում: Սաղը վարը նման մոլախոտերի դեմ պայքարել չի կարող, ուստի այդպիսի մոլախոտերով վարակված հողերը պիտի վարել 18—20 սմ. խորությամբ: Խոր վարը, վոչնչացնելով այդ մոլախոտերը, բերքը բարձրացնում է 30—50⁰/₀ ուլ:

Այդպես չե դրուժյունն արմատապտուղների և պալարապտուղների վերաբերմամբ: Այդ կուլտուրաների համար խոր վարը ավելի մեծ նշանակություն ունի, քան թե հացահատիկների համար: Սրանց համար հողը պիտի վարել 18—22 սմ. խորությամբ, վորը միանգամայն բավական է դրական եփեկա ստանալու համար:

Այն հողերը, վորոնց վարելաշերտը շատ փոքր է և կարիք է դրացվում վարի միջոցով նպաստել լինթաշերտերի հողմնահարման, այդպիսի հողեր միանգամից խոր վարելը կարող է ունենալ բացասական հետևանքներ, ուստի նման դեպքերում վարի խորացնելը պետք է կատարել աստիճանաբար, տարեկան խորացնելով 2—3 սմ.:

ՎՄՐԻ ԶԵՎԵՐԸ

Տրակտորներով վարելիս շատ կարևոր է արտը նաև բաժանել մասերի, և ապա ընտրել վարի համապատասխան ձև: Հիմնականում դրուժյուն ունի վարի 3 ձև՝ 1. համատարած կամ հարթ, 2. ակոսային 3. ձևավոր:

Համատարած ձևը ամենակատարելագործված ձևն է, վորովհետև նա կատարում է հարթ, միատեսակ, առանց Վաղարների, վար: Այդպիսի վար կարելի չէ կատարել շրջվող կամ բալանսիր դուժաններով: Այս դուժանները հնարավորություն են տալիս վարն սկսել արտի մի մասից և շարունակել մինչև վերջը առանց առանձին-առանձին մասերի բաժանելու: Նման համատարած վար կատարվում է նաև երկտրավարի ժամանակ: Ակոսային («գործ»-ային) վարի դեպքում արտը բաժանվում է մասերի և մեկ մասը վարելուց հետո դուժանը անցնում է մյուս մասը: Այս վարի դեպքում տրակտորը պտույտների համար դժարի ժամանակ է կորցնում և բացի դա, արտի մեջ ստացվում են «լաղարներ» և չվարված շերտեր այն տեղերում, վորտեղից սկսվում է վարը:

Այն շրջաններում, վերտեղ անձրևներ շատ են գալիս և հողերի մեջ կա ալիւրդ քանակությամբ խոնավություն, ալիւրի կիրառել արտ ձևի վար, վերովհետև ստացված անհարթութունները նախատում են ջրի գոլորշիանալուն, հողերի տաքանալուն, վերը շատ ցանկալի լին։

Սակայն մեծ մասամբ խորդ ու բորդ վարն անցանկալի յիշուլթ և և պետք և աշխատել խռատիկ ուժեղ խորդ ու բորդություններից։ Նման վարը ցանկալի չէ և այն տեսակետից, վոր խանգարում և մեքենաների աշխատանքը ցանքի և բերքահավաքի ժամանակ։ Անհարթութունները պակսեցնելու համար, նախքան վարն սկսելը արտը պետք է ըստանել կենտ թիվ ունեցող միականց հավասար հեռավորության մասերի, հետո վարն սկսել մեկ կողքից հետևյալ հաջորդականությամբ՝ առաջին և 3-րդ մասերը (գործերը) սկսել մեջտեղներից, 2-րդ մասը՝ կողքից, 5-րդը՝ մեջտեղից, 4-րդը և 6-րդը կողքից և ալդպես շարունակ։ Միևնույն «գործը» ամեն տարի մի և նույն վարել չի թույլատրվում։

Ձեկավոր վարի դեպքում պտուղանների ժամանակ դութանները հողից դուրս չեն բերվում, արտը վարվում և շրջանաձև։ Այս վարը տալիս և աշխատանքի բարձր արտադրողականություն, վորովհետև պտուղանների վրա ժամանակ չի ծախսվում, սակայն անկույտներում արակտորների թեքվելու անդեղում ստացվում և անրավարար վար, վորը բացասաբար և անդարդառնում բերքահավաքյան վրա։

Անցնելով կոնկրետ այն խնդիրներին, թե աշնանացան և գարնանացան հացահատիկները համար լմբը և ինչպես պետք է վարել, մեք է կանդ կառնենք 1933 թվին գարնանացանների հատկացված հողերի վարի և 1933 թ. աշնանը կատարվելիք աշնանացանների համար կատարվող ցեւերի վրա (վաղ գարնանալին)։

Այժմ խոսենք գարնանացան հացահատիկներին հատկացված հողերի վարի մասին։

Սովորաբար գարնանացանները համար նախորդ «ցել» չի արվում։

Շատ հաճախ գարնան հացահատիկները ցանվում են աշնտն հացահատիկներից հետո։ Կանոնավոր ցանքաշրջանառություն կիրառելուց հետո, գարնանացան հացահատիկները մշակվելու լին մեծ մասամբ շարքահերկ և այլ բույսերից հետո։

Աշնանացան հացահատիկներից հետո արտն ուժեղ պնդացած և չորացած է լինում։ Սողանատեղը արագ կերպով ծածկվում և մուլախտանքով, ուստի անհրաժեշտ է քաղը վերջացնելուց ան-

միջազեւ հետո խոզանավար անել 8—10 սմ. խորությամբ Դրանով նախ մենք վոշնչա ցրած կլինենք թե հին և թե նոր ծլող մուշ-խոտերը, հետագա գարնանացանի համար կստեղծենք ավելի բարենպաստ միջավայր, ջրալին, ողային և սննդառության ռեժիմներին տեսակետներին, հողի տակ կառնենք «խոզանը» (ցողունների և արմատների մնացորդները), վորը փախելով հողի մեջ, կկազմի ալն շաղախը, վորը միացնելով հողի փոշիացած հատիկները միմյանց հետ՝ կկազմի ցանկալի կնժիկներ:

Այն տեղերում, ուր դա հնարավոր է, կարելի յե միանգամայն թոր վար կատարել, թողնել առանց փոցխելու, գարնանը վորջան կարելի յե շուտ (յերբ քեշը լեկած կլինի), փոցխել կամ կրկնավարել և ցանել:

Կորոզ են լինել դեղքեր, յերբ աշնանը գարնան ցանքի համար վար չի կատարված: Այս դեպքում վաղ գարնանը հողի հասունացման մոմենտին պիտի վարել և անմիջապես փոցխել և ցանել:

Յեթե հնարավոր չե աշնանից 13—17 սմ. խորությամբ վարել, պիտի աշխատել գոնե կուտիվատորով կամ մի այլ գործիքով աշնանից փխրացնել հողը 6—7 սանտիմ. խորությամբ Դրա բերքի բարձրացման համար կարևոր գործողությունն է:

Փորձերը ցույց են տվել, վոր վորջան վաղ և կատարվում աշնան վարը, ալնքան ել հողում ավելի շատ ջուր և սննդանյութեր են կուտակվում: Բացի դրանից՝ վաղ աշնանային վարն ավելի մեծ քանակությամբ մուշխոտեր և զոչնչացնում:

Հայաստանի համարյա բոլոր շրջաններում, բացի լեռնային բարձր գոտիներից, գարնանացանների բերքն ավելի կլինի ալն դեղքերում, յերբ հողը վարված լինի աշնանից: Այդ հանգամանքն ավելի ցատուկ կերպով է արտահայտվում նախալեռնային, մըթնոլորտային տեղումներով աղքատ շրջաններում (Յիվարդ, Կոտայք և այլն):

Բացի դրանից, աշնանավարը հնարավորություն է տալիս գարնանացանը վաղ սկսելու և վաղ ել վերջացնելու: Աշնանավարը մեղմացնում է նաև գարնանը աշխատանքների լարվածությունը:

Այն դեպքերում, յերբ գարնան հացահատիկները ցանվելու յեն շարժաներկ բույսերից հետո, աշնանավար կարելի յե և չընկատարել, վորովհետեւ շարժաներկ բույսերն իրենցից հե-

առ թողնում են փութել և մուշտեաներից զգալի չափով ազատված հաղ:

Այդ հողերը պիտի վարել զարնանը, անմիջապես փոցխել և ցանել: Հետևյալ ցուցակը ցույց է տալիս, թե ինչպես է ազգում վարի ժամանակը զարնանացան ցորենի բերքի վրա:

Ամս կարգի	Փորձնական փորձարկ	Փորձի տար- վա փորձ. են	Բերք մեկ հեկտ. ցենտներով.		
			Գարն. վար.	Աշն. վար.	Չառ զանա վար.
1.	Գուտավայի փորձակայան	11	9,0	13,0	9,4
2.	Սարատովի փորձակայան	7	6,8	7,7	7,2
3.	Բեզնչուկի >	4	—	7,6	7,9
4.	Ուկսուայի > (գարի)	12	12,9	12,0	—
5.	Արևմ. Սիբիր	9	9,3	10,8	—
6.	Դոնեցկու փորձակայան	7	5,2	6,4	6,3
7.	Ո մ ս կ ի >	1	10,2	12,6	—

Այն դեպքերում, յերբ զարնան հացահատիկներին հատկացվում են նոր հողեր, վորոնք կամ բուրրովին, կամ յերկար տարիներ չեն մշակվել, ապա նման չիմանակալած հողերը շատ ոգտա-վետ և վարել նախորդ տարվա ամառը կամ աշնանը: Շատ կարե-վոր է նաև վարել այն ժամանակ, յերբ տեղի յեն ունենում մըթ-նոլորտային տեղումներ (դրանից հետանում և չիմանակալած հողերի վարելը և միաժամանակ չի ընկնում վարի վորակը): Ու-կրայինայի փորձակայաններից մեկը ցույց է տվել, վոր յերբ նոր մշակության համար հատկացվող հողերը վարում են զարնանը և զրանից հետո անմիջապես կատարվում և ցանքը, մեկ հեկտարից ստացվում է 4,3 ցենտներ ցորեն, իսկ աշնանը վարելու դեպ-քում ստացվում է 6,6 ցենտներ:

Շուտ ավանդ չիմանը չպետք է փոցխել, ալլ զարնանը սկա-վառատավոր փոցխելով հողը փխրացնել և ապա ցանել: Յերբ ար-տերը վարակված են չալիրով, ավելի լավ է նախքան խոր վար կատարելը, արտը վարել թեթև՝ 5—7 սմ. խորությամբ, միջանի որ թողնել այդ դրությամբ և ապա փոցխելով հասնել չալրի կոճղ-աբմատները:

Աշնանացան հացահատիկներին հատկացված հողերի վարի

մասին մինք մանրամասնորեն չենք խոսի, սակայն, քանի վոր մեր աշխոյրներն ու կոլխոզները 1933 թ. դարնանայիս աշխատանքներին պլանում ունեն նաև վաղ ցել, ասլա անհրաժեշտ և մի փոքր կանգ առնել ցելերի տեսակներին և նրանց հարաբերական արժեքի վրա:

Այսին հացահատիկներին հատկացված հողերը ընդունված և կոչել ցել կամ հանգիստ: Սելի դերն և հողին «հանգիստ» տալը, նրա բերքատվության վերականգնելը, վորը հնարավոր և, յեթե հողը աղւտովի մոլախոտերից, իր մեջ հազարի բույսերի հատար անհրաժեշտ քանակությամբ ջուր և սննդանյութեր ու լավանտ նրա ֆիզիկական կառուցվածքը: Այդ խնդիրներին իրականացման տեսանկյունով կանգ առնենք գոյութուն ունեցող ցելերի դեպք հատկանի վրա:

1. Ուո ցել.—Արաւ չի վարվում մոչ աշնանը և վոչ ել գարնանը: Իրա վրա ման ևն դալիս անասունները, նա դառնում և արտատակդի Արան ալդքան ժամանակաւ ջրոյում ուժեղ վարակվում և մոլախոտերով, կորցնում և իր մեջ չեղած ջրի պաշարը, մթնոլորտային տեղումներէ հարվածների և անասունների տրտրելու հետեանքով պնդանում և ալդհողերը վարում ևն հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին: Հողի չորութան պատճառով ստացվում ևն մեծ կոշտեր, և մենք ստիպված ենք լինում մի քանի տնկած փոքրիկ, մի հանգամանք, վոր ցաւ կալի չե, վորովհետեւ աւաղ ալն ել փոշիացած հողն ավելի յի փոշիանում: Յանքից 2—3 շաբաթ առաջ, կամ նույնիսկ ցանքի նախորակին կրկնավար ևն անում և ցանում ևն աշնան ցորենը: Նման ցել դոյութուն ունի մեղ մտա՝ զատ շրջաններում, վորից պիտի հրաժարի, բոլորովին: Այս ցելն անհանդուրժայի յի մանավանդ սովխոզներում և կոլխոզներում, վորովհետեւ դրանով կարելի չե բիւրքը միալն պակասեցնել և վոչ թե բարձրացնել: Այս ցելն չի կարող արդատագրիկ նաև ալն պատճառաբանությամբ, վոր իրր թե ալն ծառայում և վորպես ճարտաս: Սրանից ստացվում և չիչին քանակությամբ անպետք խոտ, մինդեռ հասցրած վնասը մի քանի տնկած ավելի մեծ և նրա տված արդյունքից:

2 Միջին ցել.—Այս ցելը կատարվում և մայիսի 2-րդ կիսից սկսած և դարձալ ունի մի շարք քաղաքական կողմեր: Սակայն հողի մեջ ջուր և սննդանյութեր կուտակուլու, ինչպես նաև մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից՝ ոչ ցելից ավելի լավ եւ Հնարավորության սահմաններում պիտի թուստփել նաև ալս ցել:

լից, սակայն աշխատանքների լարվածությունը և արակատրոնների բնականությունն այս տարի մեզ ստիպելու յնն մի շարք շրջաններում կատարել միջին ցել:

3) Վաղ ցել.— Վարում են վաղ դարնանը՝ ապրիլին, և անմիջապես փոցխվում և՛ ավելորդ գոլորշիացման առաջն առնելու համար:

Ամռան ընթացքում կատարվում են այն աշխատանքները, վորոնք կատարվում են նաև սե ցելի դեպքում:

Այս ցելն իր մի շարք դրական հատկանիշներով արժանի չէ մեծ ուշադրության և մեր սովորողներն ու կուլտուրները պիտի գործադրեն բոլոր միջոցները՝ վաղ ցել անելու համար (յեթն մի՝ այն ավել շրջանում դրողված ցել հնարավոր չի կատարել):

Նման ցելից հետո աշնան հացահատիկների բերքը հետ չի մնում սե ցելից ստացված բերքից:

4) Սեղ ցել.— Վարում են աշնանը, չեն փոցխում, վորը նշպաստում և ձառան ձուլնից ստացված ջրի լավ չորացմանը: Վաղ դարնանը արաք փոցխվում և՛ կեղեք կոտրելու և գոլորշիացման առաջն առնելու համար: Ամռան ընթացքում արաք առնն անգամ կեղև բռնելուց հետո փոցխվում կամ թեթև վարվում և, յեթե փոցխը չի կարողանում զննչացնել մոլախոտերը: Խոնավ շրջաններում փերացումը կարելի չէ կատարել բազմախոտանների միջոցով, իսկ ավելի չր շրջաններում հողը շուտ առաջ չի կարելի, վորովհետև կա ող և շուտ չորանալու ջանքից յերկու շաբաթ առաջ նորից խորը վարում են, սակայն խոր. վաթ չոր շրջաններում ցանկավի չէ իսկ խոնավ շրջաններում անբաժնա և:

Ստորև աղյուս ենք տարբեր տիպի ցելերի ազդեցությունը հացահատիկների բերքատվության վրա:

	Փորձնական հիմնարկներ	Բայանք	Փորձի արդյունքները փոքր և	Բերք մեկ հեկտարից ցնան.			
				սե ցել	վաղ ցել	միջին ցել	սե ցել
1.	Վարումի մի փոքր կյն.	աշնան ազդրա	—	—	22,3	22,3	17,3
2.	Խարկովի	»	12	—	15,8	—	11,7
3.	»	» առ. ցորեն	5	—	13,6	—	9,1
4.	Պոլտավայի	» ազդրա	12	—	21,4	20,1	15,7
5.	Բեդենշուկի	»	5	16,8	17,1	15,8	11,5
6.	Մարատովի	»	12	17,1	17,4	16,7	14,0
7.	Խերսոնի	»	32	17,3	17,4	—	19,0

Գլուղատնտեսութեան Խնտենսիֆիկացիայի հետևանքով նկարագրած ցելերի տակ գտնվող տարածութիւններն սկսում են պակասել, իրենց տեղը զիջելով «զբաղված ցելերին» կամ «ավելի միշտ և ասել կարճատե ցելերին» (կարճատե հանգիստներին): զբաղված ցելի միջոցով հնարավոր է ոգտագործել այն տարածութիւնները, վորոնք մյուս ցելերի դեպքում մի ամբողջ տարի մնում են լուծանք ոգտագործման: Զբաղված ցելերը բաժանվում են լերկու հիմնական խմբերի՝ համատարած և շարքահերկ: Գլուղութիւն ունեն նաև Կուլիսային, Ամերիկյան, Սերասոնի ցելեր:

Համատարած ցելի դեպքում մշակվում են այնպիսի կուլտուրաներ, վորոնք թույլ չեն տալիս ցանքերի հետագա խնամք (խիտ ցանվելու հետևանքով): Շարքահերկ և ցելը այն դեպքում, լերբ միջարքային տարածութիւնները հնարավորութիւն են տալիս ցելի վերաբերմամբ խնամք տածելու:

Կարճատե հանգստի համար վորեւե բույս ընտրելիս պիտի առաջնորդվել այն սկզբունքով, վոր նրանք լինեն վաղահաս և դոնե լերկու շաբաթ առաջ լըտը ազատեն՝ անհրաժեշտ աշխատանքներ կատարելու և հողը աշխանացանի համար նախապատրաստելու: Նման բույսեր կբբող են լինել այնպիսիները, վորոնք կամ շուտ են հասնում, կամ կբբող են համաքվել և ոգտագործվել դեռ լրիվ հասունութեան չհասած:

Համատարած ցելերում կբբող են ցանվել վիկը վարաւիկի կամ մի այլ հացաբուսի հետ միասին, վորոք և բարիք խոտեր: Այս դեպքում արտը պետք է վարել աշխանից և թողնել առանց փոցիելու: Գաբնանը թեթև փխրացնել և ցանել բույսերը: Վիկը պիտի հնձել լրիվ ծաղկման շրջանում (խոտի համար): Բերքահատվաքից հետո անմիջապես վաբել և փոցիել: Դրանից հետո իր ժամանակին կատարել աշխանացանը: Նման հանգիստ մեր նախալեւնային չոր շրջանների մի շարք տեղերում կատարել չի կարելի, վորովհետև այդ պեղերում մինիմումի միջ է գտնվում ջուրը, իսկ համատարած ցելի ժամանակ հողը կորցնում և հսկայական քանակութեամբ ջուր և դրանից տուժում և աշխան ցորենը: Մթնոլորտային տեղումներով հարուստ շրջաններում այս տիպի ցելը տալիս է դրական եփեկտ:

Շարքահերկ ցելի դեպքում նույնպես ընտրվում են ամենավաղահաս բույսեր և սորտեր (կարտոֆիլ, բոդի, շաղպամ, լեզիպատցորեն, տրեսածաղիկ և այլն): Այս դեպքում ևս վարը, ցանքը և բերքահատաքը պիտի կատարել այնպես, ինչպես դե կատար-

վում և համատարած ցելի դեպքում: Հալատանում այս ձևի ցել
կարելի չե կատարել և՛ նախալեռնային և՛ լեռնային շրջաններում:
Նման ցելը շուրջ ավելի քիչ և ծախսում, քան թե համատարածը,
մոլախոտերի դեմ ևս ավելի հաջող և պարզաբան:

Ստորև բերված թվերը ցույց են տալիս զբաղված ցելերի դերը
բերքի բարձրացման խնդրում:

№ Ընտանիք	Փորձակամ երմարիներ	Բույսեր	Փակի՝ տար- վա փորձ և	Բերք. մեկ հեկտար ցենտն.			
1.	Տեմերյադելի անվ. փորձ.	աղն. աղ.	6	23,0	19,7	22,8	—
2.	Վարոնեթի փորձակայան	»	13	19,2	13,5	9,3	—
3.	Նարկսի փորձակայան	»	12	25,1	19,9	18,4	—
4.	»	աղն. ցորեն	5	22,0	16,3	18,9	—
5.	Պուլավայի »	աղն. աղորա	8	23,1	17,1	12,1	—
6.	Ներսիսի փորձակայան	աղն. ցորեն	4	12,3	—	—	10,3
7.	Սարատսի փորձակայան	աղն. աղորա	4	22,2	—	15,6	—

Այնպես ցանցերը, վաղ դարնանը, յերբ հնարավորություն
և ստեղծվում դառն դուրս դալ, պիտի փոցիսել: Սա մեր պայման-
ներում նորությունն և, սակայն կարեւոր դործողությունն և: Ճիշտ
և, փոցիսը կարող և ցորենի դործը մասեր և նույնիսկ առանձին
թիվեր հողից դուրս հանել և ֆլասել, սակայն դրանից ստացված
ֆլասը մեծ չէ, վորովհետև միացած բույսերը փոցիսելուց հետո
սկսում են ավելի արագ և փաթմամ աճել և կարճ ժամանա-
կում ծածկում են հողի մակերեսը, նրանց թիվակալումն ևս
լինում և ուժեղ և ալը բույսերի հետեանքով բերքը բարձ-
րանում է: Նման ուժեղ աճեցողություն տեղի չե ունենում այն
պատճառով, վոր փոցիսելու դեպքում կտրվում է ձմեռան ձյան և
վաղ դարնանային անձրևների հետեանքով առաջացած կեղևը,
հեշտանում է ջրի և ողի մուտքը հողի մեջ, իսկ այդ լերկուսի
կարիքն էլ մեծ չափերով զգում և աշնանացանը: Այդ աշխատանքը
չպիտի ուշացնել, հակառակ դեպքում կարող և տալ բացասական
արդյունքներ:

Պիտի փոցիսել զգիւ-դաշտի և վոյ թե անդալան փոցիսե-
րով: Փոցիսի վրա ծանրությունն չդնել, բավականանալ միայն

փոցխի ծանրութիւնը: Փոցխել մեկ հետք, բացառիկ դեպքերում՝ լերկու հետք: Յետե ցանքը դտնվում է ջրովի շրջաններում, տալա ջրել 2-ից մինչև 4—5 անգամ՝ նայած շրջանին և կլիմայական ու հողային պայմաններին: Չոր կլիմայական պայմաններում, թեթև և ավազային հողերում տալ 4—5 ջուր, ծանր-կավային հողերում տալ 2—3 ջուր: Աշխատել՝ ջուրը տալ ցորենի թփա- կալման, ցողունակալման և կաթնային հասունութիւն շրջաննե- րում:

Բերքի բարձրացման տեսակետից շատ կարևոր է նաև մո- լախոտերով առանձնապես ուժեղ վարակված ցանքերի միջից հե- տացնել (կարելի լի ձեռքով) առաջին հորիզոնում դտնվող (կուլ- տուրական բույսից բարձր) մոլախոտերը: Այս աշխատանքը կու- խոշներից և սովխողներից մեծ գոհողութիւն չի պահանջելու, սա- կայն իր եֆեկտի տեսակետից միանգամայն արժանի լի ուշա- դրութիւն:

Մոլախոտերի և ֆլասատուների դեմ հաջող պայքարելու հա- մար անհրաժեշտ է նաև քաղել ու հեռացնել մոլախոտերը միջ- վակներից, առուների, ճանապարհների լեզրերից: Դրանք այն ոջախներն են, վորտեղից սկիզբ են առնում և զարգանում են գյուղատնտեսութիւնը խոշոր ֆլաս հասցնող մոլախոտերը և միջա- տային ու սնկային հիվանդութիւնները:

2. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Բերքի բարձրացման խնդրում խոշոր նշանակութիւն ունի պարարտացումը: Հետաքննաց լերկրներում, ընդհանուր առմամբ հիմնական պարարտանյութը հանդիսանում է դոմաղըր, իսկ գլու- դատնտեսութիւնը բարձր զարգացման աստիճանի հասած յերկըր- ներում հիմնական պարարտանյութերը՝ հանքային պարարտանյու- թերն են: Պարարտանյութերից ստացված եֆեկտը անհամեմատ ավելի մեծ է, քան թի սեւեկցիայից ստացված եֆեկտը:

Պրոֆեսոր Անիլսոնը գտնում է, վոր յետե բերքի բարձրա- ցումը Դերմանիայում վերջին 50 տարվա ընթացքում ընդունենք 100, ապա դա ստացվում է հետևյալ աղբյուրներից.

1. Հանքային նյութերի գործադրումից	50 %
2. Հողի մշակման լավացումից	25 %
3. Բույսերի սորտերի »	15 %
4. Ցանքաշրջանառութիւնների լավացումից	10 %

Նույնանման արդյունքներ են ստացված նաև Ֆրանսիայում: Արժանի յե ուշադրութլւն նաև ալն, վոր եքստենսիվ տնտեսութլուններում պարարտանութիւն-եֆեկտն ավելի մեծ ե, քան թե ինտենսիվ տնտեսութլուններում:

Մեզ մոտ ևս պարարտանութիւնի դերը շատ մեծ ե: Պարարտացիան հետևանքով դաշտավարական շրջաններում բերքը բարձրանում ե 50⁰/₀-ով, իսկ լեռնային մասերում դրանից բարձր ե, ուստի միջինը մենք կարող ենք ընդունել 50—53⁰/₀:

Մի շարք շրջաններում և կոլխոզներում գոմաղբը կարող ե գործադրվել իբրև պարարտանութիւն: Մեծ նշանակութլուն ունի գոմաղբի պահելու ձևը: Գոմաղբը հատուկ փոսերում պահելու դեպքում շատ քիչ կորուստներ ե ունենում, ընդհակառակը, բակիքում բաց թողնելու դեպքում՝ նա կորցնում ե մոտ 60⁰/₀ իր մեջ լեղած ազոտից, 20⁰/₀ կալիումից և 20⁰/₀ ֆոսֆորից: Գոմաղբը անշնորհք պահելու հետևանքով ալն մեզ մոտ ունենում ե խոշոր կորուստներ:

Գոմաղբը, բացի ուղղակի դերից, ունի նաև անուղղակի ազդեցութլուն բույսերի անեցողութլւն, զարգացման վրա: Գոմաղբի հետ մենք հողի մեջ մտցնում ենք վոչ միայն բույսին սնունդ հանդիսացող կարևոր ելեմենտներ, այլ նաև նյութեր, վորոնք լավացնում են հողի ֆիզիկական և ֆիզիկո-քիմիական հատկութլունները: Գոմաղբը լավացնում ե հողի ջրալին, ջերմային և անհատութլւնի ակտիւմը, ավելացնում ե հողում լեղած ողի քանակը և իր հետ հողի մեջ տանում ե մեծ քանակութլամբ բակտերիաներ:

Կարևոր ե նաև իմանալ, թե ինչ խորութլամբ պիտի տալ գոմաղբը: Վերջան խոնավ ե շրջանի կլիման, այնքան ել յերեւանաց պիտի տալ գոմաղբը, չոր շրջաններում գոմաղբը պիտի տալ ավելի խոր:

Մանր հոդերում պիտի տալ վոչ խոր, վորպեսզի նրա քայքայումը շատ չդանդաղի ողի բացակայութլւն պատճառով, թեթեւ հոդերում ընդհակառակը, ուժեղ քայքայման և լվացվելու վտանգից խուսափելու համար գոմաղբը պիտի մտցնել խոր: Բոլոր տիպի հոդերում դարձանով հարուստ գոմաղբը մտցնել ավելի խոր: Միջին տեսակի հոդերում գոմաղբը պիտի մտցնել 15—18 սմ. խորութլամբ:

Թեթև հոդերին մի անգամից մեծ քանակութլամբ գոմաղբ տալը ցանկալի չե, վորովհետև նրա վորոշ մասը նախքան ոգտա-

գործվելը արագ քաջացման հետևանքով լվացվում և բույսերի համար անոգուտ կորչում եւ:

Նման հողերը պիտի պարարտացնել հաճախակի և վոքր դոզաներով (10—12 տոնն ամեն անգամ):

Ինչպէս արդէն ստացինք, մեզ համար անհամեմատ ավելի մեծ նշանակութիւն ունեն հանքային պարարտանյութերը: Դաշտերի լիմիդացիան, մելանիդացիայի հետ միասին, հանդիսանում ե գլուղատնտեսութեան տեխնիկական ռեկոնստրուկցիայի լծակներէից և այն ել կարևոր լծակներէից մեկը: Խորհրդային քիմիական արդյունաբերութեան անընդհատ զարգացումը իջեցնում ե հանքային պարարտանյութերի ինքնարժեքը, շատացնում ե նրանց օտորտիմենտը, լավացնում ե վերակը և լայն գործադրութեան հնարավորութիւններ ստեղծում սովխոզներում և կոլխոզներում:

Հանքային պարարտանյութերը լինում են՝

1. Աղոտական: Այս խմբին են պատկանում ամմոնիում սուլֆատ, ամմոնիում քլորիդ (NH_4Cl) ամմոնիում նիտրատ (NH_4NO_3), կալցիում ցիանամիդ, չիլիական բորակ, նորվիդգիական բորակ, միդանյութ: Բացի չիլիական բորակից, վորը ստացվում ե հանքերից, մնացածները ստացվում են քիմիական արդյունաբերութեան միջոցով:

Մեզ մոտ՝ Խ. Հայաստանում գործադրվում են ամմոնիում սուլֆատ և կալցիում ցիանամիդ, ուստի մենք կանգ կառնենք այդ չերկուսի նկարագրութեան վրա:

Ամմոնիում սուլֆատը սովորաբար իր մեջ պարունակում ե 20% աղոտ: Լինում ե սպիտակ, չոր աղի ձևով, ունի փոքր հիդրոսկոպիկութիւն: Հողի մեջ մտցնելուց հետո այս պարարտանյութը հատուկ բակտերիաների շնորհիվ մասամբ փոխվում ե բորակի (այս պրոցեսը կոչվում ե նիտրիֆիկացիայի պրոցես), մասամբ ել, իբրև ամմյակ, կլանվում ե հողի կամ յուրացվում ե բույսի կողմից: Մրա հեռանալքով հողում ստացվում ե ծծմբական թթու, այդ ե պատճառը, վոր առանց այն ել թթու հողերում և մեծ դողանքով այս աղը չի կարելի գործադրել, վորովհետև դրանից կարող են բույսերը տուժել և բերքը պակասի:

Այս աղը ձեռնառու չե՝ գործադրել չեղտք և կրով հարուստ հողերում: Այն դեպքերում, չերբ սա գործադրվում ե նաև թթու հողերում, ապա դրան պետք ե խառնել նաև կիր, վորը կչեղոքացնի հողում ստացվող թթուները:

Սակայն լավ եֆեկտ կարելի չե ստանալ նաև այն դեպքերում, յերբ ամսոնիում սուլֆատը դործադրվում է սուպերֆոսֆատի հետ միասին (կամ ֆոսֆորիդների):

Յերբ պետք է տալ այս պարարտանյութը:

Վերովհետև այս աղի քայքայման հետևանքով ստացված ամֆոսկը կլանվում է հողի կողմից, ապա կարելի չե չվախենալ նրա լվացումից, ուստի և կարելի չի հողի մեջ մտցնել ցանքից շատ առաջ:

Աշնանացանների համար այս աղը պիտի մտցնել միջանի որ ցանքից առաջ և փոքրիկ՝ հողի հետ խառնելու համար: Յերբ նա դործադրվում է դարնանացան հացահատիկների համար (կամ արմատապտուղների), ապա կարելի չե կամ մտցնել աշնանը և վարել, կամ մտցնել դաշնանը՝ ցանքից 12—15 որ առաջ: Այս աղը չի կարելի դործադրել արդեն ծլած արտերում: Խառնելնրան կրի, մոխրի հետ չի կարելի, վերովհետև այդ դեպքում տեղի կունենա ազոտի կորուստ, սակայն չեթե կարիք լինի այդ նյութերը դործադրել, այդ դեպքում նրանք պիտի հողի մեջ մոցվեն ամսոնիում սուլֆատից միջանի որ շուտ կամ ուշ:

Ամսոնիում սուլֆատը կարելի չե խառնել կալիումի աղերի, զոմաղրի և սուպերֆոսֆատի հետ:

Տրվող քանակը համաձայնեցնել շրջանի ադրոնոմի հետ:

Զ. Կալցիում ցիանամիդը պարունակում է 10% ազոտ:

Այս աղն իր մեջ պարունակում է ածխի խառնուրդ, վորի շնորհիվ սե գույն ունի:

Այս աղը ազդում է ավելի դանդաղ, քան թե բորակը և ամֆոնիում սուլֆատը: Նա հողում կրում է մի շարք փոփոխություններ, մինչև վոր նրա ազդող դառնում է բույսերի համար մատչելի:

Բազաերիաներով և որդանական նյութերով հարուստ ու լավ հողմահաղմող հողերում կալցիում ցիանամիդի՝ ամֆոսկի և ածխածին դաղի վերածվելը կատարվում է արագ: Ստացված ամֆոսկը կամ բազաերիաների կողմից վեր է ածվում նիտրատների, կամ կլանվում է հողի և բույսերի կողմից: Թված հատկություններ չունենող հողերում կալցիում ցիանամիդը հեշտ կարող է վերածվել մաքուր ցիանամիդի՝ կամ դիցիանամիդի և, այդպիսով, նրանից ստացված եֆեկտը կլինի փոքր, վորովհետև այդ յերկու նյութերն էլ վատ են ազդում բույսերի վրա: Նման ձևափոխություններ կարող են կրել կալցիում ցիանամիդը նաև չերկար պահելու դեպքում, մանավանդ խոնավ պայմաններում:

Այդ և պատճառը, վոր խորհուրդ և տրվում այդ աղը գործադրել թարմ ժամանակ:

Կալցիում-ցիանամիդը հողի մեջ պիտի մտցնել 10 որ և էլ ավելի հացահատիկների ցանքից առաջ (ճակնդեղի համար մրտցնել աշնանից): Մվուկու ժամանակ փոշի յե արձակում և զբրգոռում և լրբնաթաղանթները, ուստի աշխատանքի ժամանակ լավ և լեքեսկալ հագնել կամ քիթն ու բերանը կապել թաց շորով: Մեկ հեկտարին կարելի յե մտցնել 2—2,5 ցենտներ: Կալցիում ցիանամիդը գործադրվում և նաև մուլախոտերի դեմ պայքարելու համար: Այս պարարտանյութն ստանալու համար մենք ունենք Ղարաքիլիսայի կալցիում ցիանամիդի գործարանը:

ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Ֆոսֆորական պարարտանյութերն իրենց եֆեկտի տեսակետից մեր պայմաններում բոնում են 2-րդ տեղը (1-ին տեղը բռնում են ազոտական պարարտանյութերը): Ֆոսֆորական պարարտանյութերը յատ են, բայց մեզ մետ դրանցից գործադրվում և միայն սուպերֆոսֆատը, վորի մասին և պիտի խոսենք:

Այս աղը ավելի հեշտ և լուծվում ջրում և ավելի մատչելի յե բույսերի համար, քան ֆոսֆորիդները: Վորոնք դրական եֆեկտ են տալիս վոչ բոլոր հողերում և ազդում են դանդաղ:

Սուպերֆոսֆատն իր մեջ պարունակում և 12—18% ֆոսֆորական թթու: Կարելի յե գործադրել բոլոր տիպի հողերում բացի թթու հողերից: Սուպերֆոսֆատի լավ ազդեցությունը արտահայտվում և մտցնելու 1-ին տարին, սակայն քիչ չափով նա շարունակում և ազդել նաև 2-րդ, 3-րդ տարին:

Մտցնել կարելի յե ցանքից առաջ զարնանը՝ զարնան հացահատիկների համար և աշնանը՝ աշնան հացահատիկների համար:

Սուպերֆոսֆատը չի կարելի խառնել կրի և թոմաս-շլակի հետ:

Կալիումի պարարտանյութերի վրա յես կանգ չեն առնում, վորովհետև մեր պայմաններում նրանք եֆեկտ չեն տալիս, (խոսքը չի վերաբերում մարգագետիններին):

Յ. ՄՈՒԻՐՆ ԻՐԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ

Հաշված և, վոր Խ. Միության մեջ տարեկան ստացվում և մոտ 1.64 միլիոն տոննա մոխիր: Սա մի հսկայական հարստություն և, վորը սակայն պարարտացման նպատակների համար հարկ յե-

դած չափով չի ոգտագործվում: Իր բաղադրութլամբ բավականին ուժեղ պարարտանյութ է, և պարունակում է կալիում, ֆոսֆոր, կիր, ուստի հանդես է գալիս իբրև ուղղակի և թնուղղակի պարարտանյութ:

Մոխիրը, իբրև պարարտանյութ, ոգտակալը է բոլոր բույսերի համար: Առանձնապես նա լավ է աղւում թթու հողերի վրա և մարգագետիններում: Մեկ հեկտարին կարելի լի մտցնել 6—10 ցենտներ լավ պահած մոխիր, իսկ մեղ մառ դրա դիմաց ստիպված են լինում մտցնելու դրանից մոտ 10 անգամ ավելի, վարովհետև վատ պահելու հետևանքով նա կորցրած է լինում իր մեջ յեզած անօգտանյութերի խոշոր տոկոսը: Մոխիրը գաբնանք՝ գարնանապանների համար պիտի մտցնել ցանքից 15—20 որ անաջ:

Մտցնելուց հետո անմիջապես պիտի վարել և հողի տակն տանել, հակառակ դեպքում նա կարող է առաջ բերել հողի կեղծվակալում: Մոխիրը պիտի պահել չոր շնջներում կամ ծածկացների տակ, վորովհետև անձրևների ջուրը նրա միջից լվանում և տանում են կալիումի աղերը. նրա մեջ մնում են ֆոսֆորը և կիրը:

ԻՆՉՊԵՍ ԴՈՐԾԱԴՐԵԼ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ

Պարարտանյութերը կարելի լի ցանել հողի վրա՝ շաղաքան (ցանքից առաջ) կամ ցանվող սերմերի հետ միասին՝ շարքերով:

Կիրը, ֆոսֆորիդը, վորոնք դործադրվում են մեծ դոզաներով, պիտի մտցվեն շաղաքան և լավ խառնվեն հողի հետ. միացած պարարտանյութերի մտցնելը մեծ մասամբ կախված է վոթից աղ նյութերի բնույթից, ալլ գործադրվող դոզաներից: Դիչ դոզա լինելու դեպքում մտցնել հատուկ շարժացաններով, վորոնք կարող են միաժամանակ և ցանել և պարարտանյութ մտցնել հողի մեջ (комбинированные сеялки), իսկ շատ լինելու դեպքում՝ շաղաքան տակ: Շաղաքան անելուց հետո հողը փոցխել կամ թեթև վարել՝ պարարտանյութերը հողի մեջ մտցնելու համար: Յերբ հողը պարարտացվում է ամուսնը կամ աշնանը, պարարտանյութերը աալ վարից առաջ և ապա վարել, իսկ լեթի պարարտանյութը շաղ և տրվում գաբնանը աշնանից վարված արտի յերեսին, ապա կարելի լի ըավականաալ փոցխելով կամ թեթև փրեքեցումով, վորովհետև խոր վարը գաբնանը պատճառ է դառնում

հողի չորացման: Պիտի աշխատել պարարտանյութերը շաղ տալ շաղաքան կատարող շարքացաններով և վոչ թե ձեռքով. իսկ այն տեղերում, վերտեղ նման շարքացաններ չկան, աշխատանքը պիտի կատարել ձեռքով: Պիտի խուսափել պարարտանյութերը քամի յեղած ժամանակ շաղ տալուց:

Առանձին պարարտանյութերի դերը բերքի բարձրացման խնդրում ցույց տալու համար բերում ենք Միուկյան մի շարք փորձադաշտերում ստացված տվյալները այդ ուղղությամբ:

Փորձանկան հիմ- նարկներ	Պարարտանյութ	Մի մեթ մ	Ստացված է բերք ց. հեկտ.			
			աճյուն ազոտ		Աճյուն ցորեն	
			հատիկ	դար- ման	հատիկ	դար- ման
Բեղենչուկի փոր- ձակայն	առանց պարարտաց.	2	15,8	—		
	սուպերֆոսֆատ	—	15,5	—		
Բալադովի փորձադաշտան	առանց պարարտաց.	4	—	—	10,0	28,0
	սուպերֆոսֆատ . .	—	—	—	10,5	29,2
Ումանի փորձա- կայան	առանց պարարտաց.	6	18,7	43,9		
	սուպերֆոսֆատ	—	20,5	47,7		
	ամմոն. սուլֆ.	—	17,8	45,6		
Նոր-դիլի փոր- ձակայան	առանց պարարտաց.	—	6,5	44,5		
	կանաչ պարարտ.	—	13,5	—		
Մուգադուսկի փորձադաշտան	առանց պարարտ.	—	4,4	—		
	գոմադր	—	9,2	—		
	կանաչ պարարտ.	—	11,1	—		
Կոնկարով փորձեր մոնոգովոդ շրջաննե- րում (Նախկին Յե- րևանի լըշ) վերցված պրոֆ. Պ. Գալանթ. բերոյուրից	կոնարու	—	—	—	15,64	
	ազոտ	—	—	—	22,17	
	ֆոսֆոր	—	—	—	19,11	
	ազոտ-ֆոսֆոր	—	—	—	25,36	

Փորձական հիմ- նարկ	Կուլտուրա	Բերք հեկտ. ցենտներով			
		կոնյակ	սպիտակ	ֆուֆոն	աղստ-ֆոս- ֆոս
Կոտայք-նախալենու	աշն. ցոր.	6,58	8,89	7,50	10,62
Էւան. ջրջ. (նախկին	» »	10,40	13,12	12,99	14,45
Լենինական և Սեւան)	դարն. ցորեն	8,63	11,73	11,18	16,60
	» դարձի	8,94	12,47	11,23	15,23

Հայաստանի նկատմամբ յեղած ավելները ցույց են տալիս, վոր առաջին միանիմումի մեջ դրսևմում է աղտոքը, յերկրորդ մի-
նիմումի մեջ՝ ֆոսֆորը, իսկ այդ յերկու տարրերի կոմբինացիան
տալիս է ավելի մեծ նիքեկա:

4. ՍԵՐՄԱՅՈՒՆ

Բացի հողի ռացիոնալ մշակությունից և պարարտացումից, բերքը կախված է նաև սերմացուչի վորակից և ցանքի ժամանակից ու ձևերից: Զինաւած սաղմ ունեցող յուրաքանչյուր սերմ ջերմային և խոնավութուն բարենպաստ պայմաններում ծլում է արագ և լավ: Ելելու ժամանակ սերմը ծախսում է սննդանյութեր և եներգիա: Այդ ժամանակ սաղմը չի կարող ուղտվել արեգակի եներգիայից, ինչպես նաև հողի մեջ յեղած սննդանյութերից, վորովհետև չի ունենում վնչ կանաչ քլորոֆիլ պարունակող բջիջներ և վոչ ել արմատներ:

Նշանակում է եներգիա և սնունդ նա կարող է ստանալ ի հաշիվ սերմի մեջ յեղած սննդանյութերի պաշարի: Այդ պաշարը բաղկացած է լինում գլխավորապես սպիտակուցներից և ճարպե-
րից: Պարզ է՝ վորքան սերմացուն մեծ, առողջ լինի, այնքան ել մեծ կլինի նրա մեջ յեղած պաշարը, այնքան ել ուժեղ և անաղ-
գել կընթանա սաղմի զարգացումը, ապա և բույսի անցողու-
թյունը՝ սկսած հենց առաջին որերից: Փորձերը ցույց են տվել, վոր ծանր և առողջ սերմերի մեջ յեղած սնունդի պաշարը աղ-
գում է բույսի զարգացման վրա վոչ միայն սկզբնական շրջանում, այլև իր կնիքն է դնում նաև բույսի հետագա անցողության և հասունացման վրա: Յերբ սերմն ունենում է սննդանյութերի մեծ պաշար, ապա դրա հետևանքով արմատներն ել լինում են ուժեղ, զարգացած, իսկ վորքան արմատները ուժեղ լինեն, այնքան ել

բույսն իր զարգացման հետագա շրջաններում ավելի ապահոված
կլինի թե ջրով և թե սննդանյութերով: Պարզե, վոր ալդ բոլորի
հետևանքով նաև բերքը կլինի բարձր: Սերմերի «տուղզ»-ության
և «լցվածության» ազդեցությունը յերևում ե հետևյալ որինակից:
վերցված են յեղել 188 գրամ մանր, նուշնքան միջին և նուշնքան
եյ մեծ սերմեր և ջանվել են առանձին-առանձին ու զրանցից
ստացել են հետևյալ բերքը՝

1. Մանր սերմերից	1590 գր. սերմ
2. Միջակ	2294 » »
3. Մեծ	2307 » »

Սերմերի լցված և լավ լինելը պրակտիկ ձևով վորոշվում ե
հետևյալ յեղանակով՝

1. Վորոշում են նրա արսույար կշիռը: Դա համար,
առանց ընտրություն կատարելու, համարում են յերկու կամ յե-
րեք անգամ հազարական հատիկներ և ամեն մեկ հազարը կշռում
են առանձին: Ստացված քաշերից դուրս են բերում միջինը:
Յեթե ալդ քաշերի մեջ մեծ տարբերություն ստացվի, ապա սեր-
մացուն նորից պիտի լավ խառնել և այդ աշխատանքը կատարել
նորից: Խիստ տարբերությունները ցույց կտան, վոր առաջին
անգամ սերմերը լավ խառնված չեն յեղել և միջին նմուշը վերց-
ված ե յեղել սխալ:

2. Սերմերի վորակը վորոշելու յերկրորդ ձևը՝ դա «պուր-
կայով» կամ «կոտով» սերմացու չափին և: Այս ձևով վորոշվում
ե սերմերի ծավալային կշիռը, այսինքն՝ թե վորոշ ծավալի մեջ
յեղած սերմերը վորքան են կշռում: Այս ձևը ավելի շուտ հատիկ-
ների առևտրական չափանիշն ե և քիչ պետք ե գործադրվի հա-
տիկների վորակը՝ իբրև սերմացուլի վորոշելու համար:

Բացի մեծ և ժանր սերմեր ունենալուց, անհրաժեշտ ե նաև
ունենալ մուլախոսներից ազատ և մաքուր սերմեր: Սերմերի մաք-
րությունը վորոշելու համար կան հատուկ հրահանգներ, վորոնք
ուղարկված են բոլոր շրջանները և վորտեղ ասված ե, թե ինչպես
ինչ ձևերով և վորքան պիտի վերցնել տարեկան կուլտուրաներից
նրանց մաքրությունը և ալլ հատկանիշները վորոշելու հա-
մար: Այս վորոշումների ժամանակ անհրաժեշտ ե հատուկ ուշա-
դրություն դարձնել խիստ փասակար սերմերի վրա և խնամքով
նրանց հեռացնել սերմացուլի միջից: Այդպիսի փասակար սեր-
մերն են պղնձիկ կամ խոփուկի, դառնուկի, վորմոի, պատառու-
կի և ալլ սերմերը: Յեթե այդ բոլորը միասին կազմում են սեր-

մացույի 0,5⁰%-ից ավելին, ապա ալդպիսի սերմերը ցանել թույլ է թուրվում առանց նորից դտելու:

Կարևոր է նաև սերմերի ծլունակութունը: Սերմերը կարող են լինել մեծ, ծանր, արտաքին տեսքից լավ,—բայց անընդունակ ծլելու: Նման յերևույթ կարող է տեղի ունենալ այն դեպքերում, յերբ սերմերի սաղմը փնասվում է խոնավութունից, հիվանդութուններից, թուլաներից, ժամանակի տեղությունից (հին սերմեր): Կարող է պատահել, վոր սերմերը ծլունակութունը կորցրած չեն լինում, բայց ծլում են շատ դանդաղ և վոյ համահավասար: Ալդպիսի սերմերն ևս իբրև սերմանյութ լավ համարվել չեն կարող:

Հայաստանի հողերը ուժեղ կերպով վարակված են մոլախոտերով և դրա հետևանքով սերմացուն ևս ստացվում է աղտոտ, մոլախոտերի սերմերով վարակված: Բացի դրանից, սերմացույի մեջ զգալի քանակությամբ լինում են կարաված, չմշկված, տաքեր սեծություններ ունեցող սերմեր, ինչպես նաև հող, դարձան և այլն:

Խառնուրդների մեջ ամենաանցանկալին համարվում են մոլախոտերի սերմերը: Ահա այդ բոլորից ազատվելու համար անհրաժեշտ է սերմացուն նախքան ցանելը մաքրել, զտել և տեսակավորել: Այդ աշխատանքը կատարում են տրիկերները, վորոնք միաժամանակ և՛ մաքրում և՛ տեսակավորում են սերմերը: Այժմ գոյություն ունեն ավելի բարդ կառուցվածք ունեցող մեծնաններ, սակայն դրանց նկարագրության վրա մենք կանգ չենք առնի:

Յերբ սերմերը զտված և մաքրված են մոլախոտերի սերմերից, հողի, քարերի, թեփի, դարձանի, կարտված և չմշկված սերմերի խառնուրդներից, դրանից հետո պիտի կատարել սերմերի ախտահանություն: Հետազոտությունները ցույց են տվել, վոր Խ. Միության մեջ քարամբիկ հիվանդությունից մենք ունենում ենք խոշոր կորուստներ: Պրոֆեսոր Յաչեվսկին, յեղնելով իր 17 տարվա դիտողություններից, գալիս է այն լեզրահայտության, վոր միջին հաշվով այդ հիվանդությունից մենք ունենում ենք բերքի մոտ 30% կորուստ (ՌՍՖՍՀ): Ախտահանել կարելի է ֆորմալինով, ազնի արջասպով, փարեզյան կանաչով, AB պրեպարատով և այլն (կարգաւ ընկ. Բ. Գարասեֆերյանի գրքույկն այդ մասին):

Զտված, տեսակավորած, լավ ծլունակություն ունեցող և ծանր սերմերից միշտ էլ ստացվում է ավելի մեծ բերք: Այս աչ-

խառանքների կարևորութունը, սակայն, միայն դրանով չի սահմանափակվում: Փորձերը և հետազոտութունները ցույց են տալիս, վոր յերկար տարիներ միշտ ընտրելով մեծ և ծանր սերմեր՝ հնարավոր եւ ստանալ հացահատիկի նոր սորտեր, վորոնք իրենց ցանկալի հատկանիշները կարողանում են հաղորդել սերնդից-սերունդ: Ապացուցված եւ, վոր նման յեղանակով ստացված են միշարք նշանավոր սորտեր:

Պարզ եւ, վոր տեսակավոր սերմացուն կտա ավելի մեծ բերք, քան վոչ տեսակավորը: Այնտեղ, վորտեղ կա մեկըրայնկայի, կոտպերատորկալի տեսակավոր սերմացու, պիտի պահել առանձին և գործադրել սերմացվի աշխատանքների համար:

Ֆարնանացան հացահատիկներից մենք ունենք Գլարրում գարի, վորը նույնպես պիտի պահվի առանձին և գործադրվի իբրև սերմացու:

Վորքան շրջանը, սովխողը և կոխողը շատ ցանի տեսակավոր սերմ (սելեկցիոն սերմ), այնքան եւ մեծ կլինի նրանից ստացված բերքը:

Յուրաքանչյուր շրջան ունի կլիմայական և հողային վորոշ պայմաններ: Կան նաև այդ պայմաններին հարմարված վորոշակի հացահատիկներ և առանձին տեսակներ: Որինակ՝ լեռնային շրջաններում չի կարելի մշակել «Նորա-դըլչը» ցորեն, իսկ դաշտավարական շրջաններում՝ «Դալի-Բուդդան»: Այս հանգամանքը վոչ պակաս կարևոր եւ սերմի ընտրության ժամանակ: Պիտի աշխատել լավ սերմացու ընտրել տեղում լերկար տարիներ մշակվող փորձված և իրեն արդարացրած աշխատակից: Իսկ յեթե ինչ-ինչ պատճառներով կարիք եւ լինում նոր սորտ կամ նոր տեսակ մշակելու, ապա առանց ագրոնոմի կարծիքն իմանալու՝ այդ սերմերը իբրև սերմացու չպիտի գործադրել: Յերբ ագրոնոմն եւ և դժվարանում կարծիք տալու, ապա ավելի լավ եւ նման հացահատիկը փոխարինել գուղացիների հետ տեղական սերմով, իսկ այդ սերմացուն գործադրել ուտելու համար:

5. ՑԱՆՔԸ

Յերբ սերմերը նկարագրված ձևով արգեն նախապատրաստված են, կարելի չե ցանքն տնել: Ցանել կարելի չե, լերբ հողում կա վարոշ քանակութամբ խոնավութուն և ջերմութուն: Փորձերը ցույց են տվել, վոր ծելու համար տարբեր բույսերի

սերմեր պահանջում են նաև աղբի քանակութիւնը Զուր և Զերմութիւնն, որինսկ՝ ցորենը Զուր պահանջում է իր քաշի 47,70%-ի չափով, աշորան՝ 64,3—77,7%-ի չափով, գարին՝ 57,4%-ի չափով, վարսակը 76,3—85,3%, յեզիպտացորենը 37,3%, կորեկը՝ 25,0%, վիկը 75,4%, կտավհատը 100,5% և ավլն՝ Ծլելու համար պահանջում է հետևյալ քանակութիւնը Զերմութիւնն.

Շորեն—ժինխում 3—4 աստ. Շ—ապտիում 20—25° C.

Աշորա— » 1—2 » C. » 20—25 C

Գարի— » 3—4 » C. » 20—25 C.

Վարսակ— » 4—5 » C. » 20—25 C.

Յեզիպտաց. » 8—10 » C. » 32—35 C.

Կորեկ— » 8—10 » C. » 32—35 C.

Դրանից բարձր Զերմութիւնները ցանկալի չեն, իսկ վորոշ աստիճանից բարձրը արդեն մահացու յե (հացահատիկների համար 32—40 աստ. C.),

Ավելի հաշող և ավելի լավ ծիլեր ստանալու համար խոնավութիւնն ուժեղ տատանումներ չպիտի լինի. Յերբ խոնավութիւնը հողում պակաս է լինում, այդ դեպքում սերմերը ուշ են ծլում, իսկ դա անցանկալի յերևույթ չի. Ավելի կալուն խոնավութիւնն դժուրութիւն կարող է ունենալ հսկի քիչ թե շատ խոր շերտերում, իսկ յուրաքանչյուր սերմ խորութիւնն անսահմանից ունի իր սպախմալ չափը, վորը յերևում է հետևյալ աղբյուրից.

Ամ քանակ	Բույսերի տեսակները	Թեթև հոգեւորականութիւն	Ծ ի ջ ի ն հ ո ղ ե ր ու մ		
			Խոնավ	Չ	Ծանր հոգեւորականութիւն
1.	Շորեն	5—6	2—3,5	4—5	1,5—2
2.	Աշորա	5—6	2—3,5	4—5	1,5—2
3.	Գարի	5—6	2—3,5	4—5	1,5—2
4.	Վարսակ	5—6	2—3,5	4—5	1,5—2
5.	Լորի, մաշ	6—7	3,5—4,5	5—6	2—3
6.	Կարտոֆիլ	12—14	7—8	9—1	5—6
7.	Ապուլա, կորնգան	1,0	0,5	0,8—1,0	0,5—1,0
8.	Յեզիպտացորեն	6—8	3,5—4,5	5—5,	3—4
9.	Ճահնդեղ	3—4	1,0	2,	1,0
10.	Հտավհատ	5,0	2,8	3,8	2,2

Յանք կտտարելու ժամանակ պիտի աչքի առաջ ունենալ հետևյալ ժողովածուները.

1. Սերմերի մեծությունը.—Վորժան սերմերը փոքր են, այն-
քան ել նրանք լերեսանց պիտի ցանվեն, մեծ սերմերը կարող են
ցանվել խոր:

2. Հողի խոնավության ասիւնանը.--Խոնավ հողերում սերմերը
ցանել լերեսանց, չոր հողերում՝ խոր:

3. Հողի մեխանիկական կազմությունը.—Ծանր, կավային հո-
ղերում ցանել ավելի լերեսանց, թեթեւ, ավազախառն հողերում՝
ավելի խորը: Ավազախառն հողերում պիտի խոր ցանել, վորպես-
զի սերմերի տրամադրության տակ լինի անհրաժեշտ քանակու-
թյամբ ջուր: Բացի դրանից, այդ տիպի հողերում սերմերը հեշ-
տությամբ են հաղթահարում հողի դիմադրութունը, ուստի և
կարելի չե խոր ցանել: Նորմայից ավելի խոր ցանելու դեպքում
ուշանում ե սերմերի ծլելը, վերը և ազդում ե հետագա զարգաց-
ման և հասունության վրա: Չեն ծլում, կամ ծլելուց հետո խոն-
ավության հետեանքով մեռնում են նաև հողի մակերեսի վրա մնա-
ցած սերմերը:

Դոյութւոն ունեն ցանքի հետևյալ ձևերը.

1. Շաղաքան.—Շաղաքան կատարող մեքենան կամ մարդը
սերմերը հողի լերեսին թափում ե քիչ թե շատ համահավասար,
վարից հետո փոցխի կամ ալլ միջոցներով կարիք ե լինում սեր-
մերը խառնել հողի հետ: Դրա հետեանքով սերմերի մի մասը
ընկնում ե շատ խոր, մի մասը մնում ե հողի լերեսին. և այդ
լերկու դեպքում ել նրանք չեն բոսնում: Առանձնապես այդ բանը
նկատելի չե լինում այն դեպքում, լերք փոցխվում ե տեղական
փոցխերով: Ավելի լավ արդյունք ե տալիս «զիգ-զազ» փոցխը:
Այս ձևի ցանքի ժամանակ սերմերի մի մասի կորուստի հետեան-
քով ստիպված ենք լինում հեկտարին 2—3 փութ ավելի ցանել,
քան թե շարքացանի դեպքում:

Դա խոշոր կորուստ ե, լերք մենք այն հաշվի չենք առնում
Հայաստանի մասշտաբով: Ուստի ավստեղ, վորտեղ դա հնարավոր
ե, պիտի խուսափել շաղաքան կատարելուց:

2. Սովորական Եարգացան.—Շարքացան անելու. համար դո-
յութւոն ունեն միջանի տիպի շարքացաններ: Շարքացանների
առավելութւոյններն այն են, վոր նախ սերմերը դասավորում են
առարածության մեջ հավասար և հետագայում ել նրանց զարգաց-
ման ընթացքը տեղի չե ունենում հավասար պայմաններում:

Սա կարևոր մոմենտ ե՝ բույսերի նորմալ զարգացումն ապա-
հովելու տեսանկետից:

Բացի դրանից, խորութիւն տեսակետից ևս սերմերը դասա-
վորվում են ավելի ուղիւնով ալաւաններէ մեջ, քան շաղաքանի
ժամանակ։ Այդ բոլորի հետեանքը լինում է ալ, վոր նախ մեծ
քանակութեամբ սերմացու տնտեսվում է, և վոր գլխավորն է,
բույսերի հետագա դարգացումը միահամուռ և լինում (և ստաց-
ված բերքն էլ բարձր)։ Այդ է պատճառը, վոր բոլոր հնարավոր
գնալքերում պիտի կատարել շարքացան։ Շաղաքան պիտի կատա-
րել այն տեղերում միայն, վորտեղ շարքացաններն աշխատել չեն
կարող։

Շարքացանի ձեւերիցն են նաև Եարգացան-բնացանը, Եարգա-
ցան-ժապավենաձեւի ցանքը, Եարգացան-խաչաձեւը յեւ Եարգացան-
լայնաԵարգը, սակայն հացահատիկների նկատմամբ սրանք չեն
գործածորվում, ուստի դրանց նկարագրութեան վրա կանգ չենք
առնում։

ՅԱՆՔԻ ԽՈՐՈԻԹՅՈՒՆԸ

Յանքի խորութիւնը կարող է պատճառ դառնալ բերքի և՛
բարձրացման և՛ անկման։ Յանքի խորութիւնը սերտ կերպով
կապված է ցանքի ժամանակի հետ։

Վորքան հացահատիկը ցանվում է վաղ և լավ պատրաստ-
ված հողում, այնքան ավելի քիչ կարելի յի ցանել և մեծ բերք
առանալ։ Նայած ցանքի ժամանակին և հողի առանձնահատկու-
թիւններին—կարելի յի ցանել 100—150 կիլո մեկ հեկտարին։
Այս խնդիրը վորոշելիս պիտի առաջնորդվել Հողժողովման կող-
մից ուղարկված հրահանգներով (նաև այլ խնդիրները վորոշելիս)։
Յանքի խորութիւն վրա ժամանակից բացի ազդում է նաև սեր-
մերի տնտեսական պիտանիութիւնը, սերմերի տեսակը, հողի
բերրիութիւնը, նրա կուլտուրական վիճակը։ Վորքան հողը բերրի
յի և բարձր է նրա կուլտուրական վիճակը, այնքան մեծ է լի-
նում բույսերի դարգացման տեմպն ու բնութիւնը և այնքան եւ
հնարավոր է քիչ սերմ ցանել։ Հակառակ դեպքում պիտի ցանքը
կատարել ավելի խիտ։

Ավելի բարձր և ցուրտ շրջաններում պիտի ցանել ավելի
խիտ, քան թի ցածրագիւր վայրերում։ Հիւսիսում ցանում են խիտ,
հարավային վայրերում՝ պակաս, արևելյան մասերում նույնպէս
ավելի խիտ, քան թի արևմտյան մասերում։

Ստութիւն հարցը սերտ կերպով կապված է տեղի պայման-
ների հետ։

Ամեն անգամ հաշվի պիտի առնել շրջանի և տեղի փորձը, հարմարեցնել տեղի հողային և կլիմայական պայմաններին:

Խոշոր նշանակութիւն ունի բերքի բարձրացման խնդրում նաև ցանքի ժամանակը:

Բազմաթիւ դիտողութիւնները և փորձերը ցույց են տվել, լոր մեղ մոտ՝ 10. Հայաստանում ամեն տարի մինք խոշոր կորուստներ ենք ունենում թէ՛ Ուկրայնիկայի, թէ՛ աշխանացան ալլ ցորենների և թէ՛ զարնանացան հացահատիկները ուշ ցանելու պատճառով:

Գործն աշխատեալ պիտի կազմակերպել, լոր ցանքի շրջանն ընդգրկվի լորոշված ժամանակամիջոցում և հնարավորին չափ կարճ տևի: Ձոր շրջաններում ցանքի տեղութիւնը 12—15 օրից ալելի չպիտի լինի: Մնացած շրջաններում ալլ ժամանակամիջոցը կարող և միջանի որով յերկաբել: Ամենից շուտա պիտի ցանել ցորենը, զարին, վարսակը, արևածաղիկը: Վաղ ցանվող ալլ բույսերի համար արտերը պիտի աշխատել վարել աշխանից: Դա կարևոր պայման և մոլախոտերի դեմ կռվելու և բերքի բարձրացման խնդրում: Յերքեք չալեք և մոտանալ, լոր զարնան հացահատիկները և շարքահերկ բույսերը մոլախոտերին թուլ դիմադրողներ են:

Յերկբորդ պայմանը, զա՝ աշխանից վարված արտի վաղ զարնանալին փոցին և: Յերը արտերը աշխանից վարված չեն և պիտի վարել զարնանը, ապա ցանքը պիտի առել վարի հետ միասին:

Թե վորքան մեծ նշանակութիւն ունի զարնան ցանքի ժամանակը, ցույց են տալիս հետևյալ ալլալները՝ լորոնք ստացվել են տարբեր փորձակայաններում:

1. Խարկովի փորձակայանի ալլալները.

Վաղ ցանված ցորենից ստացվել և մեկ հեկտարից 20,8 ցենտներ.

Միջին » » » » 15,9 »

Ուշ » » » » 7,8 »

Ուրեմն՝ միայն ժամանակին կատարված ցանքը բերքը կը բերապատկել և:

2. Խերսոնի փորձադաշտի ալլալները (8 տարվա միջինը).

Վաղ ցանքը տվել և մեկ հեկտարին աշխան աշորա 16,54 ցենտներ.

աշ. ցորեն—11,41 ցենտներ,

Մեջին » » » 17,30 ցենտներ. 12,4 ցենտներ

Ուշ » » » 13,9 ցենտներ. 6,8 ցենտներ:

Նույնաման ալլալներ ստացված են բազմաթիւ փորձերից նաև ուրիշ փորձակայաններում: Սարատովի հացահատիկային ալլ-

տեսութեան ինստիտուտը ցույց է տվել, Վոր դարձնանացան ցորենների 6—7 որով ուշ կատարված ցանքը յերաշտի լենթակա շրջաններում համադրո է ընդհանուր բերքի 14—15 տոկոսի անկման: Կատարված փորձերը ցույց են տալիս նաև, Վոր վաղ կատարված ցանքերը Վոչ միայն հեշտ են պայքարում մոլախոտերի և յերաշտի դեմ, այլ ուժեղ են ղեկավարում նաև ֆլուսատուներին: Որինակ՝ Դեկտրապետրովսկայի փորձակայանում մարտի 22-ին ցանված դարձնան ցորենը մեկ հեկտարից տվել է 16,2 ցենտներ ցորեն, և 4,60⁰-ով ֆլուսված է յեղել ֆլուսատուների կողմից, ապրիլի 6-ին ցանվածը տվել է՝ 12,28 ցենտն. ֆլուսատուների պատճառած ֆլուսը յեղել է 11,9 տոկոս, ապրիլի 17-ի ցանքը տվել է 4,35 ցենտներ, ֆլուսվածութունը յեղել է 29,3 տոկոս, ապրիլի 17-ի ցանքը տվել է 4,35 ցենտներ, ֆլուսվածութունը յեղել է՝ 29,3 տոկոս, վերջապես մայիսի 3-ի ցանքը տվել է 2,5 ցենտներ բերք և 62,7 տոկոս ֆլուսվածութուն: Այսպիսով վաղ կատարված ցանքը Վոչ միայն միջոց է յերաշտի դեմ պայքարելու, այլ և կարևոր ֆակտոր է ցանքերը ֆլուսատուներից փրկելու համար:

6. ՄՈԼԱԽՈՏԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴԵՐԸ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Մինչև այժմ կատարված հետազոտութւնները ցույց են տվել, Վոր ամեն մի հեկտար հողում զանվում են միջանի տասնյակ ցենտներ մոլախոտերի սերմեր: Մեզ մոտ կատարված փորձերը ցույց են տվել (Փյուզինիստիտում), Վոր մեր դաշտավարական շրջանների մեկ հեկտար հողում կա միջանի տասնյակ միլիոն մոլախոտերի սերմեր՝ 10—20 սմ. խորութեան մեջ: Վորովհետև մոլախոտերը հաճախված են կլիմայական և հողային տվելի անբարենպաստ պայմաններին, ուստի նրանք նույնիսկ հողերի մոտ մշակման և անկուլտուրական վիճակի գեպըում և վատ չեղանակների կարողանում են արագ ծլել, առաջ անցնել կուլտուրական բույսերից և տալ տասնյակ հազարավոր սերմեր: Դրանք խլում են կուլտուրական բույսերից հողում չեղած ջրի և սննդանյութերի զգալի մասը, զրկում են նրանց նաև լուսից ու ջերմութեանից և, այդպիսով, ուժեղ չափով պակասեցնում են բույսի բերքատվութունը: Յերաշտ տարիներին նրանց բացասական դերը

այնքան մեծ է, վոր բերքի աճելում կարող է տեղի ունենալ մինչև 100 տոկոսով:

Մեզ մոտ վտանգավոր են հետևյալ մոլախոտերը, վորոնց դեմ պիտի սխտեմատիկ կերպով պայքարել.— դանդուղանը, չալիբը, պատառուկը, պատառուկանման հնդկացորենը, թելուկը, կաշուկների տեսակները, վորոմը, դառնուշքը, զսպլան գլուխը, կանգառների տեսակները, պոչուկը, դադձը, լվածաղիկը, յեզան լեզուները, թրթնջուկի տեսակները և Եւրիշները:

Հին ագրոնոմիների բոլոր ջանքերը, մոլախոտերի դեմ կռվելու ասպարիզում՝ անհատական գաճաճ տնտեսությունների պայմաններում, չէին կարող տալ վորևէ զգալի հետևանքներ (և չեն տվել): Ամեն տարի միջնակների մոլախոտերը մեծ քանակութեամբ բազմանում էին, սերմ տալիս ու վարակում արտերը:

Միայն այժմ են ստեղծվել պայմաններ՝ ագրոտեխնիկան հիմնականորեն վերափոխելու, մոլախոտերի դեմ տարվող պայքարը գիտական իմքերի վրա դնելու և վճակած տեմպերով այդ պայքարը առաջ տանելու, և դրանով կայուն բերք ստեղծելու համար:

Պորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները մինչև այժմ շատ քիչ բան են կատարել խոշոր սոցիալիստական արևմտեսության առավելություններից ոգտվելով՝ մոլախոտերի դեմ հաջող պայքարելու համար: Մինչև այժմ նրանք աշխատանքի վոչ ճիշտ կազմակերպման հետևանքով շատ հաճախ ուշացրել են բոլոր կարևոր ագրոտեխնիկական միջոցառումները, իսկ հալտնի յե, վոր մոլախոտերի դեմ հաջող պայքարելու, յերաշտի դեմ կռվելու և բերքատվությունը բարձրացնելու համար, հսկայական նշանակություն ունի վարի, ցանքի, քաղհանի, նոսրացման, կուլտիվացիայի ժամանակը, խորությունը և ձևը:

Սարատովի հացահատիկային տնտեսության ինստիտուտում պրոֆ. Տուլայկովի ղեկավարութեամբ Սերգեյեվի կողմից դրված փորձերը ցույց են տալիս, վոր հողն ամենից շատ շուր գոլորշիացնում է այն դեպքում, յերբ նա ծածկված է լինում մոլախոտերով: Այդ փորձերը դրվել են 1923 թվից մինչև 1929 թիվը ներառյալ: Ահա այդ տվյալներից մի յերկուսը, վորոնք ավելի քան պարճախոս ապացույց են, վոր մոլախոտերը պակասեցնելով հողում յեղած շուրը, ուժեղ չափով իջեցնում են նաև բերքը:

Սեպ ցելուս հողի խոնավության տկոսը 1928 թվի սեպտեմբերի 3 ին

Ցելի մշակման ձևը	Խոնավության տոկոսը 0—30 սմ. խորության մեջ	Խոնավության տոկոսը 0—100 սմ. խորության մեջ
1. Առանց փխրեցման և առանց մոլախոտերը քաղհանելու.	9,0	10,7
2. Փխրեցրած և մոլախոտերը քաղհանած.	16,4	14,8
3. Մոլախոտերը քաղհանված են ձեռքով, իսկ հողը փխրեցրած չէ.	14,0	13,5
4. Հողը փխրեցրած է, բայց մոլախոտերը քաղհանված չեն.	9,1	9,2

Սեպ ցելի չարքեր հողակոորներն ամռան ընթացքում մաման ձկավ մեակելուց հետո առնանք ցելվի և ցորեն յով սաացվել և հետեվյալ բերքը

Ցելի մշակման ձևը	Ստացվել է մեկ հեկտարից ցենտներով բերքը	Նույնը տոկոսներով, բնականով փխր. և մ. լախ. քաղհանած—100
1. Առանց փխրեցման և խոտերը քաղհանելու.	2,4	27,6
2. Փխրեցրած և մոլախոտերը քաղհանած.	8,7	100
3. Մոլախոտերը քաղհանած են ձեռքով, իսկ հողը փխրեցրած չէ.	7,95	91,4
4. Հողը փխրեցրած է, բայց մոլախոտերը քաղհանված չեն.	2,5	28,4

Դրան մոտ թվեր են ստացվել նաև աշնան աշորայից և մյուս կուլտուրաներից. Յերնելով այս տվյալներից, Սերգեյիվը գտնում է, վոր ուշագործության պիտի դարձնել միայն մոլախո-

տերի վրա և դրանով եւ քաջատրում ե բերքի բարձրացումը։ Գտնում ենք, վոր մոլախոտերն ունեն վճռական նշանակութիւն, սակայն թերազնահատել մյուս ազգոտեխնիկական ձեռնարկումների նշանակութիւնը՝ Սերգեյեւի կողմից սխալ ե։

Մոլախոտերի դեմ հաջող պայքարելու համար առաջարկում ենք՝

1. Զուր դնել արտերի վրա, վորտեղ դա հնարավոր ե՝ դանդաղացնել և մյուս կոճղարմատավորներին խնդրելու համար.

2. Աշնան և գարնան վարը կատարել վաղ և խոր.

3. Կարճատև ցիւրի դեպքում ընտրել խոյախի բույսեր և այնպիսի սորտեր, վորոնք արտերը հնարավոր չափով շուտ են ազատում, վորոշնայի աշնան ցորենը ժամանակին կտրելի լինի ցանել, դրանով ապահովում ե նրանց դիմացկանութիւնը ձմեռն ցրտերի նկատմամբ, իսկ վորքան լավ ձմեռի ցորենը, այնքան ել գարնանը նա ալելի հաշոգութիւմը կպայքարի մոլախոտերի դեմ:

4. Խոզաների կատարել տնպւման, վորովհետև այդ մեթոդը մի շարք ճիւղային գարնանային մոլախոտերի նկատմամբ ապիս և ամենամեծ եփեկտը։ Անհրաժեշտ ե, վորպեսզի խոզանա հերկը կատարվի անժիլայես բերքը հովաքելուց հետո:

5. Խիստ չոր շրջաններում կիրառել նաև մաքուր վաղ ցել:

6. Բոլոր շրջաններում կիրառել կանոնավոր ցանքաշրջանառութիւն:

ՑԱՆԳԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Մինչև այժմ շատերը ցանքաշրջանառութիւնը դիտել են իրեն բույսերի հաստրակ հաշորդականութիւն։ Ցանքաշրջանառութիւն նման բնորոշումը սխալ ե և թերի:

Սոցիալիստական գյուղատնտեսութիւն պայմաններում ցանքաշրջանառութիւնը դաշտավարութիւն կարելու խնդիրներից մեկն ե, նրա հետ կապված ե բազմապիսի ազգոտեխնիկական ձեռնարկումների իրականացում, վորոնց վերջնական նպատակն ե կենսաազդեցի պետութիւն պլանային առաջադրանքները բերքատվութիւն բարձրացման, ինքնարժեքի իջկման և աշխատանքի բարձր արտադրողականութիւն բնագավառներում:

Ցանքաշրջանառութիւնները և նրանց հետ կապված ազգոտեխնիկական ձեռնարկումները միաժամանակ սովխոզներում և կոլխոզներում պիտի կարևոր լծակ հանդիսանան նրանց կազմակերպչական տնտեսական ամբապնդման համար:

Ամեն անգամ ցանձաշրջանառութիւնն կիրառելիս պիտի լինել պետական առաջադրանքներից: Պետական առաջադրանքներում վերջոված են բույսերի (կուլտուրաների) տոկոսայան հարաբերութիւնները, նրանց բերքատուութիւնն չափը, աշխատանքի արտադրողականութիւնը: Ագրոտեխնիկայի, խիմիզացիայի, մեխանիզացիայի զարգացման ներկա պայմաններում ցանձաշրջանառութիւնը հանդիսանում է գյուղատնտեսութեան մեջ պրոցեսները կազմակերպող կարևոր մոմենտ: Առանց ցանձաշրջանառութեան մենք չենք կարող ճիշտ կազմակերպել աշխատանքը, լրիվ ոգտագործել քարշող ուժը, գործիքներն ու մեքենաները և բարձրացնել բերքատուութիւնը: Ընկ. Յակովլեւիք գտնում է, վոր «ագրոտեխնիկան» դա ցանձաշրջանառութիւնն է»:

Հասցահատիկային և այլ տնտեսութիւններում ցանձաշրջանառութեան բացակայութիւնը պատճառ է դառնում դաշտերի մոլախոտերով վարակվելուն, վորը, ինչպես ասվեց, առաջ է բերում բերքի անկում: 1931 թվին կոլխոզային խիստիտուտե կողմից կազմակերպված եքսպեդիցիան ցույց է տվել, վոր բազմաթիվ սովխոզներում ու կոլխոզներում մենք ունեցել ենք մեծ կորուստներ մոլախոտերի ուժեղ զարգացման հետևանքով: Ագրոտեխնիկայի և տեխնիկայի զարգացման ներկա ետապում կուլտուրական բույսերի խոշոր մասի համար մոնոկուլտուրան հնարավոր է: Այդ բոլորից լինելով առաջատար կուլտուրայի հետ միասին պետք է կանոնավոր և նախորդ վերջոված հաջորդականութեամբ մշակվեն նաև ուրիշ կուլտուրաներ:

Պարզ է, վոր բույսերի հաջորդականութեան վերաբերող նկատառումները քարացած, անփոփոխ մոմենտներ չեն: Արտադրական ուժերի փոխվելու, ագրոնոմիայի, քիմիայի, տեխնիկայի նվաճումների հետ միասին պիտի փոխվի նաև մեր մոտեցումը, յչնչր պահանջը ցանձաշրջանառութեան նկատմամբ: Մենք խոշոքալքեր ենք անում հողային և կլիմայական պայմանների առանձնահատկութիւնների տիրութեամբ և այդ նվաճումների հաջող կիրառման բնագավառներում, ռեսուրս պիտի կարենալ բարձր բերք ստանալու համար ոգտագործել զարգացման սովյալ ետապին մատչելի բոլոր ագրոտեխնիկական ձեռնարկումները: Այսպիսով, զարգացման ներկա ետապում ցանձաշրջանառութիւնը դառնում է բերքի բարձրացման խնդրում հիմնական միջոցառումներից մեկը: Մասնագիտացած տնտեսութիւններում նա պիտի լինի ճկուն և հարմարեցված հետագա մտանադիտացումը խորաց-

նելու համար, նա պետք է իրենից ներկայացնի վոչ միայն բույսերի կանոնավոր հաջորդականութիւն, այլ նաեւ պիտի ընդգրկի վորոշ ազրոտեանիկական միջոցառումները վոչ կոմպլեքս և բոլոր հնարավորութիւնները ստեղծի՝ աշխատող ձեռքերի և քարշող ուժի կազմակերպման համար:

ՅԱՆՔԱՇԻՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի յե, վոր յեթե հողը աղղում է բույսի զարգացման վրա, նպա բույսն էլ իր հերթին ազդեցութիւն է թողնում հողի վրա: Ահա այդ փոխազդեցութիւնները ստեղծում են մի շարք քիմիական, ֆիզիկական և բիոքիմիական բնութիւն ունեցող հետևութիւններ, վորոնցից գլխավորները հետևյալներն են.

1. Յուրաքանչյուր բույս հողից վերցնում է վորոշ քանակութեամբ սննդանյութեր: Տարբեր բույսեր տարբեր քանակութեամբ և տարբեր հարաբերութեամբ էլ սննդանյութեր են վերցնում: Պալարադառուկները և արմատադառուկները հողից վերցնում են ավելի կալիում, հացաբույսերը՝ քիչ, թիթեռնածաղիկ բույսերը հողը նուշինակ հարստացնում են ազոտով և ստեղծում են նպաստավոր պայմաններ իրենցից հետո մշակվող բույսերի համար:

2. Տարբեր բույսեր իրենց սնունդը կարողանում են վերցնել հողի տարբեր խորութիւնից: Այդ հանգամանքը կախած է նրանց արմատալին սխառնմի ուժեղութիւնից և զարգացման թափից: Ընդեղենների արմատները գնում են ավելի խոր, ոգտագործում են հողի խոր շերտերում գտնվող սննդանյութերը և ջուրը, իսկ հացահատիկները, ընդհակառակը, ոգտագործում են, գլխավորապես, հողի վերին շերտերը:

3. Տարբեր բույսեր տարբեր հատկութիւն ունեն լուրացնելու հողում գտնվող լուծված և դժվարալուծ աղերը, որինակ՝ շաքարի ճակնդեղն ավելի հեշտ է կարողանում լուրացնել կալիումի դժվարալուծ միութիւնները, քան հացահատիկները:

4. Բույսերն ունեն տարբեր պահանջ նաև հողում լեղած ջրի նկատմամբ:

5. Բույսերի ազդեցութիւնը հողի ֆիզիկական հատկութիւնների վրա նույնպես տարբեր է: Շարքահերկ բույսերը հողը իրենցից հետո թողնում են ավելի փուլար վիճակում, քան հացահատիկները, բայց դրա հետ միասին նաև փոշիացնում են հողը:

Պարզ ե, վոր ցանքաշրջանառություն կազմելիս այս բոլոր տա-
նանձնահատկությունները պիտի հաշվի առնել: Բույսերի հաջր-
դականությունը կատարել այնպես և այն հաշվով, վորպեսզին ա-
խորդ բույսերը միանգամայն նպաստավոր պայմաններ ստեղ-
ծեն հետևորդ բույսերի վարդապատն համար:

6. Շատ կարևոր ե նաև հաշվի առնել բույսերի բիոլոգիա-
կան հատկանիշները: Կան մի շարք բույսեր, վորոնք մուլախոտերի
դեմ պայքարել չեն կարող, ընդհակառակը՝ կան բույսեր ել, վո-
րոնք շատ հաջող իրենք են կարողանում ճնշել մուլախոտերին:
Բացի դրանից մի շարք մուլախոտեր, հիվանդություններ և մի-
ջատներ հարմարված են վորոշ բույսերի, կամ ինչպես ասվում ե,
մասնագիտացած են վորոշ բույսերի:

Այս հանգամանքը խոշոր դեր ե կատարում մուլախոտերի, հի-
վանդությունների և միջատների տարածման և բազմացման խընդ-
րում: Պարզ ե, վոր այս յերեսույթի դեմ պայքարելու ամենակարող
միջոցը կլինի բույսերի հաջորդականությունը՝ կանոնավոր ցան-
քաշրջանառությունը, ինչպես նաև մաքուր ցիւերը, հողի և ցան-
քերի ուշադիր խնամքը, աշնանցային վարը, խոզանավարը և այլն:

Այսպիսով, բույսերի տարբեր վերաբերմունքը դեպի սննդա-
նյութերը, ջուրը, հողի ֆիզիկական դրությունը, կուլտուրական
վիճակը, մուլախոտերը, հիվանդությունները և միջատները պիտի
խիստ հաշվի առնել ցանքաշրջանառություն կազմելիս:

Մինչև այժմ ասածներից դժվար չի հասկանալ, վոր քանի
վոր տարբեր շրջանների կլիմայական և հողային պայմանները
միասեռակ չեն, քանի վոր տարբեր տեղերում ջրային, սննդա-
նյության ռեժիմները հոգում տարբեր են, մուլախոտերը ևս միա-
սեռակ չեն, ապա չարևոն, աստիճանաբար ցանքաշրջանառությունը
բոլոր շրջանների և սովորական-կուլտուրների համար տալ չի կարելի:
Ապահովելով առաջատար կուլտուրայի բարձր բերքատվությունը,
հաշվի առնելով բոլոր թված մոմենտները, ամեն մեկ շրջան կազ-
մելու չե իր շրջանի և կուլտուրների համար հատուկ ցանքաշրջա-
նառություններ, հիմք ընդունելով Հողօգտագործության կողմից ուղար-
կած ցանքաշրջանառության ժխեմաները և համաձայնեցնելով
այն ցանքաշրջանառության հանրապետական բլուրդի հետ:

Ցանքաշրջանառության կազմակերպչական անտեսական հի-
մունքների մասին չենք խոսում, վորովհետև շուտով այդ մասին
տպագրվելու չե մի ուրիշ աշխատանք:

Վերջում անհրաժեշտ ենք համարում տալ Հողօգտագործության
կողմից մշակված հրահանգը ցանքաշրջանառության մասին, ինչ-
պես նաև տարբեր շրջանների համար մշակված ցանքաշրջանա-
ռությունների միջանի տիպերը:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ

ԿՈԼԵՈՋՆԵՐՈՒՄ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Ցանճաշարջանառությունը պետք է ապահովի պետութեան և ժողտնտեսութեան պլանային առաջադրանքները:

2. Ցանճաշարջանառությունը պետք է ապահովի առաջատար կուլտուրայի բարձր տեսակարար կշիռը:

3. Կիրառելով ազրոտեխնիկական միջոցառումների լրիվ կոմպլեկսը ստանալ մաքսիմում բերք, նամանավանդ առաջատար կուլտուրայի վերաբերյալ:

4. Ցանճաշարջանառությունը պետք է ապահովի ցանվելիք կուլտուրաների այնպիսի հերթականություն, վորը դրավական լինի մոլախոտերի դեմ պայքարի և հողի ստրուկտուրայի լավացման:

5. Ցանճաշարջանառությունը պետք է ունենա մինիմալ ճանախութամբ դաշտեր, միայն այն հաշվով, վոր նա բավարարի վերևում հիշված բոլոր պահանջները:

6. Ցանճաշարջանառությունը պետք է ապահովի դյուղատնտեսական աշխատանքների, ճարտող ուժի, մեքենաների և դյուղատնտեսական դործիքների ռացիոնալ, համաչափ դասավորումնամբողջ տարվա ընթացքում:

7. Միջկոլխոզային և միջդյուղյան ցանճաշարջանառություն ունենալ չի թույլատրվում:

8. Ցանճաշարջանառութեան անցնելիս չթերագնահատել հացահատիկային կուլտուրաները և վոչ մի դեպքում չպակասեցնել հացահատիկային կուլտուրաների տարածությունները:

9. Ցանճաշարջանառությունը պետք է ապահովի կոլխոզի և կոլխոզնիկների անասունները կուլիտ, հյութավի և հնարավորինչ ավելի ուժեղ կերով:

1. Համրապետական ցանքասաշրջանառութեան բյուրոյի կողմից շրջանին առաջադրված ցանքասաշրջանառութեան վարիսնտները յենթադրուած են աղբարատարական խորհրդակցութեան շնորութեան և այդ վարիսնտները համակերպելով շրջանի առաջադրանքներին և պայմաններին, դնում են կոլխոզի արտադրական խորհրդակցութեանը:

2. Շրջանի կողմից առաջադրված տնայիկ սխեմաներից կոլխոզը ընտրում և իր համար ամենանպատակահարմար սխեման, յենթադրուած իր կանկրեստ պայմաններից, նախադրած և պլանային առաջադրանքից ըստ կուլտուրաների:

3. Շրջանի և կոլխոզի մեջ տեղի ունեցած վեճը ցանքասաշրջանառութեան վերաբերյալ լուծում և համրապետական ցանքասաշրջանառութեան բյուրոն:

4. Ենթե քաղաքիկ դեպքերում ցանքասաշրջանառութեան անցնելու ամհարաժեշտ և լինում տարածութեանները վերջը փոխիստում համեմատած կոլխոզին տված պլանային առաջադրանքին, այս փոխիստութեանը թուլատրուած և հողըածնի համաձայնութեամբ միայն այն դեպքում, յենթե մի կոլխոզում պակասեցրած սարածութեանը կծածկվի շրջանի այլ կոլխոզի տարածութեան համապատասխան լայնացումով, վերջին հաշվով ապահովելով շրջանի պլանային առաջադրանքներն ընդհանրապես և դարձնանքանի պլանը մասնավորապես:

5. Ցանքասաշրջանառութեան մեջ կերի ռեսուրսները պետք և հաշվել, յենթադրուած անասունների անումից, նրանց կերակրման լավացումից: Կերի բալանսը հաշվելիս, պետք և հաշվի առնել, թե՛ կոլխոզի և թե՛ առանձին կոլխոզնիկի անասունները: Հատուկ ուշադրութեան պետք և դարձնել արտատեսերով ապահովելու հարցի վրա:

6. Աղբարտնիկական տեսակետից, ցանքասաշրջանառութեանը պետք և բավարարի հետեյալ պահանջները.

ա) կուլտուրաների ճիշտ հերթականութեան, ապահովելով հիմնական առաջատար կուլտուրայի համար ամենալավ տեղը.

բ) ապահովել մոլախոտերի դեմ պայքարը.

գ) ցանքասաշրջանառութեան դաշտերի վրա պարարտանյութերը պետք և դատարարել ռացիոնալ կերպով՝ ոտեղծելով նպատակովոր պայմաններ բերքատուութեան բարձրացման համար:

3. ՑԱՆԻՍԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Կոլխոզի դաշտերի բաժանումը պետք է վերջացնել 15 ուր ցանքսից առաջ:

2. Ցանքաչրջանառության համար դաշտերի բաժանումը պետք է կատարել աշնայն, վեր (հնարավորության սահմաններում) հողակտորներն ունենան հարմար և կտրճ ճանապարհ ղեպի առնառններ կամ հիմնական հումուսի հանձնման կետեր: Այդ դաշտերի հողակտորները բաժանելիս, անհրաժեշտ է հաշվի առնել ճանապարհների ցանցը, բնական սահմանները և այդ հողակտորները հարմարեցնել արակառորի ռադիոնալ ողտադործմանը:

3. Վերապես որենք՝ ցանքաչրջանառության հողակտորները պետք է իրար հավասար լինեն, տատանում թույլ տրվում է 5—10 0/0: Հնարավորության սահմաններում հատկացնել մեկն մեկ դաշտին մեկ հողակտոր:

4. Յեղադաշտերի համար 1933 թվին պետք է հատկացնել մոլախոտերով ամենաչափավարակիված հողակտորը:

5. Բաղմամյա խոտաբույսեր ունեցող ցանքաչրջանառության անցնելու հիմնական նախապայման պետք է ընդունել 1933 թվին անպայման ունենալ մեկ հողակտոր դարձանացան կամ աշնանացան հացահատիկ՝ բաղմամյա խոտաբույսերի յենթացանքներով: Երբեք բամբակացան շրջաններում բամբակի պլանը կատարելու հետ զուգընթաց պետք է կոլխոզում ունենալ 12,5 % հացահատիկ բաղմամյա խոտաբույսերի յենթացանքով:

6. Ցանքաչրջանառությունը պետք է անցկացնել կոլխոզի փաստացի տարածության վրա:

7. Ցանքաչրջանառությունը կիրառելիս դաշտերի բաժանումը զստալորել այն հաշվով, վեր հետադաշում մենաանտեսների մոտքը կոլխոզ խանդարիչ հանդամանք չհանդիսանա և միաժամանակ կոլխոզի ցանքաչրջանառությունը չխախտվի:

8. Բրիգադաներն արտադրական վանդակները կցելու ընթացքում պետք է ընդունել հետևյալ սկզբունքը. ցանքաչրջանառության ամբողջ ժամանակաշրջանում բրիգադը ամբողջապես պիտի լինի վերջնական հողամասերի այն հաշվով, վեր ցանքաչրջանառության առաջին դաշտերում յուրաքանչյուր բրիգադին հողամաս արամադրվի. բրիգադին արամադրված հողակտորները պետք է լինեն իրար մոտ, վերաբերյալ խույս արվի անողտուտ տեղավորությունից:

Հանրապետական Ցանքաչրջանառության բյուրո

Առաջարկվում են հետևյալ տիպային ցանքասարկանառութ-
թյունները՝

I

- | | |
|-----------------------------|-------------------|
| 1. Գարնանացան + բաղամյա խոտ | 5. Սիլոս |
| 2. Բաղամյա խոտ | 6. Աշնանացան |
| 3. Բաղամյա խոտ | 7. Շաքարի ճակնդեղ |
| 4. Շաքարի ճակնդեղ | |

II

- | | |
|-------------------------|------------------------------|
| 1. Գարնանացան + կորնգան | 4. Գարնան ցորեն |
| 2. Կորնգան | 5. Միամյա ընդեղեններ և սիլոս |
| 3. Կորնգան | 6. Աշնանացան |

III

- | | |
|-----------------------------|----------------|
| 1. Գարնանացան + բաղամյա խոտ | 3. Բաղամյա խոտ |
| 2. Բաղամյա խոտ | 4. Միախոտ |

IV

- | | |
|----------------------------|-----------|
| 1. Աշնան ցորեն + աշնան վիկ | 2. Միախոտ |
|----------------------------|-----------|

V


1. Զբաղված ցեւ
2. Աշնանացան
3. Գարնանացան
4. Շաքարեղեղ
5. Գարնանացան


VI

1. Զբաղված ցեւ
2. Աշնանացան
3. Շաքարեղեղ
4. Գարնանացան

VII

- | | |
|----------------|---------------|
| 1. Զբաղված ցեւ | 3. Գարնանացան |
| 2. Աշնանացան | 4. Գարնանացան |





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004418

Գիճը 40 է.

134.

11
123042